1895 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 (13) ՈՒՐԲԱԹ

№. 100—ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 100

1895 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 (13) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կենտրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Բաժանորդագրութիւն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանզադամեանի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ. ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.
Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція "Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում՝ են հայերէն եւ օտար լեզուներով։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
Օրօրոցաքաղաքացիք (Սերգեսկ. փողոցի դիմաց). երեխաների (երկու սեռի) ընդունելութիւնը կըսկսուի սոյն օգոստոսի 22-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից։ (7—6)

ՓՈԽԱԴԻՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԿՐԱԿԻ ԴԷՄ ԹԻՓԼԻԶՈՒՄ
ապահովագրում է Թիֆլիզի ամեն տեսակ շինութիւնները։
ՏԵԼԵՓՈՆ № 288.
Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրայ և բաց է առաւօտուայ 9 ժամից մինչև 2½-ը։
Մուտքը՝ Վելեամինով. փողոց, քաղաքային դումայի պօղոդ։
(Ուրբ.) (21—4)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Վեց մեծ պետութիւնները։
Զուր ջանքեր։
Ճաքիր փաշայի խօսակցութիւնը։
Պետութիւններ և Դուռը։
Նշանները երևում են։
Խորհուրդներ Թիւրքիայի կառավարութեան։
«Նովոյէ Վրէմիայի» մի հեռագիր։
Դամասու դէպքերը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Վ. Վ. Բեզօբրազովը «Տերսկ. Վեդ.» խմբագիր։ Հեռախօս Փօթիում։ Դոկտոր Միսաեր Բեղնէէր։ Սանահնից։ Օձունից։ Գանձակից։ Կոջօրից։ «Զահրումար» վէպը։ Գեներալ Ալխազեանի ուղեորութիւնը Պետերբուրգ։ Նամակ

ԸՆԴՀԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — Նամակ խմբագրութեան։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Մուշից։ Նամակ Օրդուից։

ՖԵԼԻԵՏՕՆ.—Ախալցխայի շարն ու բարին։ Հայաստան և Համիդիականներ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՎԵՑ ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անգլիական կառավարութիւնը գահական ճառով և նախարարների բառմիտ լրագրները ճգնում են հաստատել, թէ երեք մեծ պետութիւնների—Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի համերաշխութիւնը խախտուած է, մենք աւելի հաւատում ենք անգլիական կառավարութեան պարլամենտում արած յայտարարութեանը, որ այդ համերաշխութիւնը միանգամայն շարունակւում է. մենք չենք կարող ենթադրել, որ թէ ռուսաց կառավարութիւնը և թէ ֆրանսիականը, որոնք իրենց երկրներում պաշտպանում են անձի և ըստացուածքի, մարդկային պատուի և քրիստոնէական եկեղեցիների անդորր ապահովութիւնը, չը ցանկանան այդ քրիստոնէական սկզբունքները պաշտպանել մի քրիստոնեայ ազգի վերաբերմամբ, որ մի անգամ ընկել է մոլի և վայրենարարոյ մուսուլմանի ճիրանները։

Այն չէզոքութիւնը, որ պահում էին մինչև այժմ Աւստրիան, Գերմանիան և մասամբ Իտալիան հայկական խնդրի վերաբերմամբ, և որ անբացատրելի է, մեծապէս մեղաւոր էր այդ խնդրի շուտափյթ և յաջողակ լուծման։ Տաճկական կառավարութիւնը իւր վաղեմի սովորութեան համաձայն աշխատում էր օգուտ քաղել դրանից. կարծում էր, որ եթէ այդ երեք մեծ պետութիւնները չեն միանում միմեանցին հայկական խնդրում, ուրեմն դրանք տարբեր հայեացք ունին։

Լորդ Սալիսբուրին փորձում է տաճկական կառավարութիւնը փարատել և այդ վերջին սխալ և մոլար ենթադրութիւնից։ Հեռագրները հաստատում են, որ անգլիական կառավարութիւնը դիմել է մնացեալ երեք մեծ պետութիւններին և հրաւիրել, որ նրանք էլ, իբրև Բերլինի դաշնագրութիւնը, և մասնաւորապէս 61-րդ յօդուածը ստորագրող պետութիւններ, միանան և ընդհանուր ուժով պահանջեն տաճկական կառավարութիւնից այն անհրաժեշտ բարենորոգումները, որ հարկաւոր են Տաճկահայերին։

Անպայման եւրոպական կոնտրոլ և ըստ կարելւոյն բոլոր մեծ պետութիւնների համերաշխ, բայց և տուկուն գործունէութիւն հայկական ռեֆորմները իրագործելու համար,—ահա այն նշանաբանը, այն ծրագիրը, որով սկսում է գործել անգլիական նոր մինիստրութիւնը։ Մենք մեծամեծ բարիքներ ենք սպասում այդպիսի ծրագրից։ Առանց Եւրոպայի իրական և արթուն կոնտրոլի ոչ մի բարենորոգութիւն չէ կարող ապահովել Ցանկահայերի գոյութեան և զարգացման պայմանները և սանձահարել տաճկական կառավարութեան այժմեան անիշխանական և գազանաբարոյ ընթացքը։ Միևնոյն ժամանակ ամեն մի մեծ պետութեան առանձին, նոյն իսկ ամենաանկեղծ քայլը յօգուտ հայկական խնդրի կը յարուցանէ միւսների կասկածը...։ Եւ ահա Սալիսբուրիի սէր փորձուած և հմուտ գործնական քաղաքագէտը ջանք է անում խուսափել այդ երկու չարիքներից ևս և շնորհիւ իւր տաղանդի ու վարքի փորձառութեան, ձգտում է այնպիսի հիմունքներով լուծել հայկական խնդիրը, որ մենք ամենահաստատ ենք համարում և յարատև։

Ասում են, թէ մեծ պետութիւնների համերաշխ գործունէութիւնը, կոնցերտը մի դատարկ խօսք է և անրովանդակ տերմին։ Իրականութեան մէջ գոյութիւն ունին վեց միմեանց դէմ մրցող պետութիւններ։ Եթէ յաջողուէր հայկական խնդրում բոլորովին հակառակն ապացուցանել, թէ կը լինէր դա այն, որ մարդասէր, քրիստոնէական և, կուլտուրական նպատակներն ու ձգտումները միշտ կարող են գոյացնել այդ համերաշխութիւնը։

Ի՞նչ պիտի անէ նրանից յետոյ սուլթանի կառավարութիւնը. կը դանի արդեօք նա մի այլ հնար կաշկանդելու և յետաձգելու հայկական բարենորոգութիւնների իրագործումը, թէ կը խուսափի այն չարիքը իւր գլխուն բերելուց, որից նրան զգուշացրեց անգլիական առաջին նախարարը և որի անունն է «վերջնական անկում»։ Կրկրնէ՞ նա նախազգուշացնողի անկեղծութիւնը, մի մարդու, որ երկար ժամանակ պաշտպանել է Տաճկաստանին և մի անգամ էլ՝ վերջին տաճկաուստական պատերազմին փրկել է նրան այդ «վերջնական անկումից»...

Տեսնենք։

N. N.

ԶՈՒՐ ՋԱՆՔԵՐ

Ճաքիր-փաշան «Pall-Mall-Gazette» լրագրի թղթակցին բացատրել է իւր առաքելութեան նպատակը, իւր ապագայ գործունէութեան ծրագիրը։

Հէնց առաջին խօսքից Թիւրքիայում զովուած այդ փաշան ներկայանում է իբրև մի մարդ, որ ամբողջովին ենթարկուած է թիւրքաց նեխուած ու փտած կարգերին ու խարդախ ու կեղծ դիպլոմատիային։ Եբևակայեցէք, ընթերցող, որ այդ փաշան ոչ թէ Հայաստան, այլ Քիւրդիստան է գնում. և գընում է ոչ թէ հայերի արիւն-արտասուքը սրբելու գնէ պատրուակով, այլ Թիւրքիայի և Անգլիայի միջև նախկին բարեկամական յարաբերութիւնները վերականգնելու համար։

Քրիստոնեայ աշխարհը Հայաստան է կոչում, հայերի համար ապահովութիւն է պահանջում, Ճաքիր-փաշան այդ աշխարհի բարեկամութիւնը վայելելու համար՝ Քիւրդիստան է գնում։ Եւ լոգիքական այդ ցնորաբանութիւնը և այդ տարտղի ծաղրը մի հանու, մի սէյլդի, մի դերվիշի առջև չի արտայայտում, այլ եւրոպական առաջնակարգ ազգի կիսապաշտպանական լրագրի թղթակցի առջև։

Ո՞ւմն է ամօթը՝ թիւրքերին, որ դեռ քաջութիւն ունի այդպէս ծաղրելու, թէ Եւրոպային, որ նրան այդքան երես է տուել։

«Հայաստան բառը մեզ մօտ արհամարհուած է, ասում է Ճաքիր-փաշան։ Լաւ լսեցէք, Հայաստան բառը մեծապատիւ փաշայի համար արհամարհուած է. այն փաշայի, որ իւր գործունէութեամբ Եւրոպայի դիպլոմատիական ուղեղից հայկական խնդիրը բառնալու կոչումն ունի։

«Սակայն ես շնորհակալ կը լինէի, աւելի է փաշան, եթէ դուք ինձ ցոյց տայիք Հայաստանի բուն սահմանները»։

Ի՞նչ են ցոյց տալիս այդ անիմաստ բառերը. կամ այնքան տգէտ է Ճաքիր փաշան, որ իրեն տեսչութեանը յանձնուած երկրի նոյն իսկ աշխարհագրական գիրքը չգիտէ, և կամ այնքան անարգելիորեն է, որ գիտենալով հանդերձ ստում է։ Սակայն աւելի հիշան այն է, որ Ճաքիր-փաշան դրանով յայտնում է, թէ թիւրքայ «օրհնեալ» կառավարութիւնը մինչև այսօր էլ հաստատ է մնում իւր վճռին, նա չի ուզում լսել հայերի բողոքը, Եւրոպայի պահանջը, նոյն իսկ ուրանում է այն հանգի սաւոր խոստումները, որ Հայաստանի ռեֆորմների վերաբերութեամբ ինքն է քանիցս անգամ տուել եւրոպական պետութիւններին։

Ճաքիրն անսահման իրաւունքներ նպատակութիւնից երևում է, որ մատուռը շինուած է 10-րդ դարում ըստ հայկական տոմարի։ Այս արձանագրութիւնը դեռ ամբողջապէս կարդացուած չէ, որովհետև մի մասը թաղուած է հողի մէջ։

Ծուրղուսը ուխտագնացութեան համար (տէրէ) երկու գլխաւոր օր ունի՝ Վարդավառի և Աստուածածնի տօներին։ Այս հանդիսաւոր տօներին մի ժամանակ Ծուրղուս էր հաւաքվում Ախալցխայի և շրջակայ հայաբնակ գիւղերի ամբողջ ուխտաւոր ժողովուրդը։ Այստեղ ամեն բան ազգային էր, ամեն բան ընտանի. ամեն ոք աղօթում, զուարճանում էր այնպէս, ինչպէս սովոր էին զուարճանալ և աղօթել մեր բարեպաշտ նախնիքը նահապետական պարզ դարերում. բայց աւաղ, ժամանակը ո՞րքան դաւանել ու փոխուել է. ցաւ ի սիրտ մենք այսօր նկատում ենք, որ մեր ժողովրդի մեծագոյն մասը, թողած իր հին մայրենի սրբավայրերը, միամտօրէն դիմում է դէպի օտարի ծոցը։ Մեր ժողովուրդը կատարեալ հօտ է, բառիս բուն նշանակութեամբ, նրան հարկաւոր են արթուն հովիւներ՝ բայց ուր է «հովիւ քաջ, որ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց իւրոց»։

Ճաքիր-փաշան հետեւեալն է ասել Լոնդոնի „Pall-Mall Cazette“ լրագրի թղթակցին.

«Կարող եմ ձեզ հաւատացնել, որ իմ ցանկութիւնն է Քիւրդիստանում կարգը վերականգնել և իմ ու ձեր ազգերի մէջ վաղեմի բարեկամական յարաբերութիւնները հաստատել։ Իմ հրամանքներն ու իրաւունքներն այնպէս են, որ հեշտութեամբ կարելի է այդ նպատակին հասնել։ Մենք մտադիր ենք Անատոլիայում լաւ վարչութիւն ներմուծել,—Հայաստան անունը մեզնում արհամարհուած է. Սակայն ես շնորհակալ կը լինէի, եթէ դուք կամ մի ուրիշը ցոյց տայիք ինձ Հայաստանի բուն սահմանները։ Իմ իրաւունքներն անսահման են։ Որ ես նախապաշարուած թիւրքերիցը չեմ, այդ կարող էք տեսնել նրանից, որ իմ ծառաները՝ մէկի բացառութեամբ քրիստոնեաներ են։ Հայաստանի վերաբերմամբ անասելի շատ խօսուեցաւ ի միջի այլոց և Լոնդոնում։ Անգլիական թղթակիցների չափազանցութիւնները շատ վը-

Ախալցխայի հասարակական՝ մխիթարական երևոյթներով ազքատիկ կեանքի մէջ մխիթարականը մի այն տեղս գրադարան-ընթերցարան կոչուած հիմնարկութիւնն է, որ բացել է Բարեգործական Ընկերութեան տեղական ճիւղը 1892 թուականին։ Շինութիւնը եկեղեցական է, յարմար է, միայն շինած է մեծ և աղմկալից փողոցի վրայ. շնորհիւ ծառայողների հոգացողութեան պահվում է օրինակելի մաքրութեամբ։ Կարգապահութիւնը խիստ է։ Հնայելով որ գրադարանը նոր է և, հազիւ 3½ տարի կը լինի բացուելը, նա ունի 1492 հատոր ցուցակագրուած և 200 հատոր դեռ չցուցակագրուած գիրք։

Սոյն 1895 թուականին գրադարան-ընթերցարանն ստանում է 29 պարբերական հրատարակութիւն, որոնցից օրաթերթ ութը՝ «Արձագանք», «Մշակ», «Նոր-Դար», „Новости“, „Русскія Вѣдомости“, „Новое Обозрѣніе,“ „Кавказъ“, «Իվերիա». շաբաթաթերթ ութը՝ «Ցարգ», «Հաւիղ», „Всемірная Иллюстрація“, „Вѣстникъ Русскаго Сельскаго Хозяйства“, „Ремесленная Газета“, „Недѣля“, „Петербурская Жизнь“, „Карсъ“. ամսագիր տասը՝ «Արարատ», «Մուրճ», «Աղբիւր», «Բազմավէպ»,

ՖԵԼԻԵՏՕՆ

ԱԽԱԼՑԽԱՅԻ ՀԱՐՆ ՈՒ ԲԱՐԻՆ

Հնայելով, որ Ախալցխան ծովի մակերևոյթից 3367 ոտնաչափ բարձր է գտնվում, բայց նա՝ ընկած լինելով նեղ ձորի մէջ և երկու կողմից սեղմուած լինելով լերկ ժայռերով՝ ունի աւելի խիստ քան մեզմ կլիմայ։ Ձմեռը խիստ ցուրտ է լինում, իսկ ամառն անհամեմատ շոգ. երբեմն շարունակ անձրևներ են տեղում, իսկ ամառը յարատև երաշտ է լինում։ Օրինակ այս տարուայ գարնանային երեքամսեայ անձրևային եղանակներից յետոյ վերահասու չոր ու ցամաք ամառը, այնպէս որ յունիսի 15-ից մինչև օգոստոսի 15-ը անձրևի երես չտեսանք, միայն ամսոյս 15-ին երկնակամարի վերայ ամպեր երևացին ու սկսեց անձրև գալ, իսկ 18-ին շրջակայ բարձր տարածը ծածկուեցան ձիւնով։

Հունձը վերջացել է. գիւղացիք հիմա կալսում են հացահատիկները։ Ցորենի և գարու այս տարուայ բերքը միջակից պէտք է բարձր դասել։ Պտուղներն արդէն հասել են և չնայելով նոցա թանգութեանց ու վատ յատկութեան Ախալցխայի մրգասէր ժողովուրդը չի կարողանում չափաւորել իր պահանջը դէպի նորա գործածութիւնը. այս պատճառով էլ ջերմով, փորցաւով, լուծով և սոցա նման ուրիշ տկարութիւններով հիւանդացողների թիւը շատ շատ է։ Վիճակագրական տեղեկութիւնները մեզ ցոյց են տալիս, որ Ախալցխայում ամենից շատ մահացութիւն պահանում է հունց օգոստոս ամսին, այսինքն այն ժամանակ, երբ հասնում են պտուղները։

Կանոնաւոր բժշկութիւնն անմատչելի է Ախալցխայի մեծագոյն հասարակ դասակարգին։ Հարկաւոր է մտածել հասարակական բժիշկ ունենալու և ազքատ դասակարգին ձրիաբար դեղ մատակարարելու մասին։ Միակ ձեռնհաս հաստատութիւնը, որ կարող է հոգ տանել այդ մասին, Բարեգործական Ընկերութեան տեղիս ճիւղն է, որի և ուշադրութիւնը դարձնում ենք այս կենսական նշանակութիւն ունեցող խնդրի վերայ։

Առևտուրն ընկած է. ազքատութիւնն օրըստօրէ աճում է. աւելի յուսահատական և անմխիթար է արհեստաւորների դրութիւնը. Ախալցխայի մի ժամանակ ճարտար և իր բանուածքներով յայտնի հայ վարպետը այսօր մոլորուած, ձեռքերը ծոցին՝ չգիտէ ինչ անէ, ուր վազաք հանէ իր ձեռագործ աշխատանքը։ Արհեստաւորների թիւը շատ է, իսկ նոցա գործուածքների վերայ եղած պահանջը սակաւ։

Ուսումնարանական տարին վերջանում է. վաղը միւս օրը վերայ կը հասնի սեպտեմբերի մէկը՝ մեր թափառական ուսուցիչների համար այդ օրհասական նշանակութիւն ունեցող ճակատագրական օրը. բայց մեր ուսումնարանները դեռ ոչինչ չեն արել. ուսուցիչներից մի քանիսը արձակուեցան, մի քանի այլ հեռատես ուսուցիչներ էլ տեսնելով իրերի տարտամ դրութիւնը իրանք հեռացան. այսպէս հին խումբը քայքայուեցաւ, իսկ նորը կազմակերպող չկայ։ Հոգաբարձութեան, աւագ ուսուցչի և հայր թեմական տեսչի միջև շարունակ գրագրութիւններ են տեղի ունենում, բայց նոքա աւելի իրար փոքը վիրաւորանքներ հասցնելու, քան մի գործ շինելու նպատակ ունին։ Ցաւալի բան. մեր դպրոցները, որ տարեկան 10—12 հազար ռուբլի են կլանում և ըստ նիւթականի մշտապէս ապահովուած են եկեղեցական խոշոր կալուածքների եկամուտներով, միշտ փայլել են իրանց մտաւոր և բարոյական առաջադիմութեան բացակայութեամբ։ Այստեղ հարկաւոր են լաւ գօրեղ և բարեկարգիչ ձեռներ։

Ախալցխան իր շրջակայքով յայտնի է իբրև բարեպաշտ ու ջերմեռանդ ժողովուրդ. նորա այդ բարեպաշտութեան և երկիւղածութեան ապացոյցներից մէկն էլ կարող է համարուել նորա դէպի ուխտագնացութիւն ունեցած սէրն ու փափագը։ Եղուսաղէմի, սուրբ Կարապետի և Էջմիածնի ուխտաւորների մէջ միշտ պատուաւոր տեղը բռնել են Ախալցխայի ուխտաւորները։ Բացի ուխտագնացութեան այդ գլխաւոր սրբավայրերից, Ախալցխան ունի, այսպէս ասած, և իր ընտանեկան ուխտատեղիները, որոնք ցրուած են թէ քաղաքում և թէ քաղաքից դուրս՝ շրջակայքում։ Վերջիններից ամենանշանաւորն անշուշտ Ծուրղուսն դիւղն է, ուր գտնվում է «Յովհաննէս Աւետարան» կոչուած երկաթագիր մագաղաթեայ սքանչելի Աւետարանը։ Ծուրղուսից փոքր ինչ հեռու դէպի հիւսիս անտառի կողքին գտնվում է և «Մայր եկեղեցի» կոչուած մատուռը, որ այժմ քայքայուած է և աւերակ։ Մատուռի մէջ ի միջի այլոց գտնվում է մի հրաշակերտ քանդակագործուած խաչաքար, որի վրայ եղած զուտ հայկական արձանագրութիւնից երևում է, որ մատուռը շինուած է 10-րդ դարում ըստ հայկական տոմարի։ Այս արձանագրութիւնը դեռ ամբողջապէս կարդացուած չէ, որովհետև մի մասը թաղուած է հողի մէջ։

Ծուրղուսը ուխտագնացութեան համար (տէրէ) երկու գլխաւոր օր ունի՝ Վարդավառի և Աստուածածնի տօներին։ Այս հանդիսաւոր տօներին մի ժամանակ Ծուրղուս էր հաւաքվում Ախալցխայի և շրջակայ հայաբնակ գիւղերի ամբողջ ուխտաւոր ժողովուրդը։ Այստեղ ամեն բան ազգային էր, ամեն բան ընտանի. ամեն ոք աղօթում, զուարճանում էր այնպէս, ինչպէս սովոր էին զուարճանալ և աղօթել մեր բարեպաշտ նախնիքը նահապետական պարզ դարերում. բայց աւաղ, ժամանակը ո՞րքան դաւանել ու փոխուել է. ցաւ ի սիրտ մենք այսօր նկատում ենք, որ մեր ժողովրդի մեծագոյն մասը, թողած իր հին մայրենի սրբավայրերը, միամտօրէն դիմում է դէպի օտարի ծոցը։ Մեր ժողովուրդը կատարեալ հօտ է, բառիս բուն նշանակութեամբ, նրան հարկաւոր են արթուն հովիւներ՝ բայց ուր է «հովիւ քաջ, որ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց իւրոց»։

նաս տալին։ Ամեն բան թղթի վրայ այլ կերպարանք ունի, քան իրականութեան մէջ։ Ինչ մեր ծրագրին է վերաբերում, նա կարող է արտայայտուել մի քանի բառերով։ Ամենից առաջ ընդհանուր աշխարհագրով ժողովրդների թիւը կ'որոշեմ, և ըստ այդմ քրիստոնեայ և մահմեդական ստիճանաւորներ կը նշանակեմ։ Ապա կ'անցնեմ խճուղու և երկաթուղու գծեր անցնելուն՝ առևտուրը զարգացնելու համար։ Կարգը պահպանելու նպատակով ժանդարմների կը կազմեմ, որ բաղկացած կը լինի քրիստոնեաներից և մահմեդականներից։ Եթէ երկու դաւանութիւնները օրէնքին կը ծառայեն, գրանով արդէն շատ բան արուած կը լինի նրանց միջի հակառակութիւնը վերացնելու համար։ Արդարադատութեան մէջ այնպիսի սիստեմ կը մացնեմ, որ դանդաղ դաւանութեան մարդիկ հաւասար իրաւունքներ ունենան։ Բայց գլխաւոր արդիւնքը, ինչպէս ասացի, հաղորդակցութեանց ճանապարհների բարւոքումիցն եմ սպասում»։

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ և ԴՈՒՌԸ

«Times»-ի Բեռլինի թղթակիցը՝ հաւատարիմ աղբիւրներից ծագած տեղեկութեանց վրայ հիմնուելով, հաստատում է, թէ Գերմանիայի կայսրը՝ օգուտ քաղելով սուլթանի վրայ իւր ունեցած ազդեցութիւնից, աշխատել է նրան համոզել, որ ընդունի Հայաստանի համար Անգլիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի առաջարկած ռէֆորմների ծրագիրը։

«Standard»-ը կարծում է, թէ Հայկական խնդրի վերաբերեալ բոլոր բանակցութիւններն ի վերջոյ նրանով կատարուին, որ Բերլինի դաշնագիրն ստորագրող բոլոր պետութեանց ներկայացուցիչներից կազմուած մի վերահսկող Յանձնաժողով կը կազմուի։ Այդ յանձնաժողովին կը յանձնուի պահանջած ռէֆորմների կանոնաւոր կիրառութեան վրայ հսկելու գործը։

«Daily Telegraph»-ը հաւատացած է, թէ սուլթանը մօտ ապագայում Հայաստանի և նրա ռէֆորմների վերաբերութեամբ մի իրական կը հրատարակէ, որ թէև Ռուսիային ու Ֆրանսիային կը գոհացնէ, բայց և այնպէս բիչ հիասթափութիւն չի պատճառիլ Անգլիային։

Մի քանի լրագրներ պնդում են, թէ Ֆրանց-Յոսէփի կայսրը ևս աշխատում է սուլթանին համոզել, որ Հայաստանի ռէֆորմներն ընդունի։

ՆԶԱՆՆԵՐԸ ԵՐԵՒՈՒՄ ԵՆ

«Mémorial Diplomatique» լրագիրը հաղորդում է, թէ Բրիտանիայի ծովային նախարարն ու ծովային վարչութեան լորդերը տակաւին Լօնդօնում կը մնան և չեն հեռանալ, որովհետև Թիւրքիայում նախապատրաստուող դէպքերից կարող են լուրջ խնդիրներ ծագել, որոնց լուծելու համար անհրաժեշտ է ծովային վարչութեան բոլոր անդամների ներկայութիւնը։ Լուրեր են պտրտում անգլիական զօրանոցի երեք գունդերի սպառազինման մասին։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

(«Նով. Վրէմ.» օգոս. 26-ի առաջնորդողը)

Ի բոլոր սրտէ պէտք է ցանկանալ, որ Կ. Պոլսից «Հաւասի» գործակալութեան հաղորդած լուրը ճիշտ լինի։ Այդ լուրն ասում է, թէ սուլթանը ցանկութիւն է յայտնել Հայաստանի համար երեք պետութեանց առաջարկած ռէֆորմների ծրագիրն ընդունելու։

Հենց այն րոպէից, երբ յայտնի դարձաւ այդ ծրագրի բովանդակութիւնը, մենք չէինք դադարում կրկնել, թէ թիւրք կառավարութիւնը ուրիշ միջոց չունի դուրս գալու այն վերին ստիճանի դժուար դրութիւնից, որի մէջ գտել են նրան վերջին հայկական դէպքերը. միակ միջոցն է կազմակերպել Հայաստանի կառավարութիւնն այն հոգով, ինչպէս ցոյց են տուել Ռուսիայի, Անգլիայի և Ֆրանսիայի դիպլոմատիական խորհուրդները։

Երեք պետութեանց առաջարկած ռէֆորմները խոկապէս դուրս չէին գալիս այն սահմաններից, որ արդէն գոյութիւն ունի սուլթանի տիրապետութեանց մի քանի մասերում, որոնց ամրողջութիւնն ու անմասնելիութիւնը ապահովուած է Բեռլինի դաշնագրով։ Ռէֆորմներն իրագործելուց յետոյ՝ Հայաստանն առաջուայ պէս մի զուտ տաճկական նահանգ կը լինէր, միայն առանձին վարչական հաստատութիւններով, որոնց խորհուրդն է այնտեղ բնակող բազմաթիւ քրիստոնեաներին ապահովել մահմեդական վարչութեանց կամայականութիւնից և թիւրք զինուորների գազանական յարաբերութիւններից։ Իրերի այդպիսի դրութիւնը բոլորովին չէր նշանակում նոյնիսկ սուլթանի կառավարութեան հեղինակութիւնը, ինչպէս այն չի նշանակում Լիբանանում և Կրետէ կղզում։ Բացի դրանից Օսմանեան Դուռը գիտէր, որ իրեն առաջարկուած ծրագիրը մի մինիմում է այն պահանջների, որոնցով Բեռլինի դաշնագիրն ստորագրող եւրոպական պետութիւններն իրաւունք են համարում դիմել նրան. դաշնագիր, որ Թիւրքիայի վրայ պարտաւորութիւն է դրել ռէֆորմներ տալ Հայաստանին։ Նա գիտէր, որ Անգլիան ձգտում էր ուրիշ հեռուն գնալու և Հայաստանից երիտասարդ Բուլղարիա ստեղծելու։

Ճշմարիտ է, Սէնտ-Ջէմի կաբինէտը՝ մինչև անգամ իր կազմակերպութեան փոփոխուելուց յետոյ՝ Դրանն առաջարկուած պահանջների խնդրում պաշտօնապէս չի հեռացել Պետերբուրգի և Փարիզի կաբինէտներից։ Մինչև անգամ այս րոպէին էլ Սալիսբուրիի նախարարութեան անդամները բարձրաձայն հերքում են այն լուրը, իբր թէ հայկական խնդրին միջամտած երեք պետութեանց դեսպանների միջև Կ. Պոլսում տարաձայնութիւններ են ծագել։ Բայց դժուար է բոլորովին անհիմն համարել այնպիսի լուրերը, որպիսին է այն՝ թէ Անգլիան մտադիր է Թիւրքիայի դէմ ծովային ցոյց անել՝ Դարդանել հանելով Բրիտանական նաւատորմը, որ թիւրքաց ջերմուն է կանգնած։

Չի կարելի աչքաթող անել, որ Սալիսբուրիի նախարարութիւնը տակաւին դէմ հանդիման կանգնած է պարլամէնտի առջև, որ հրաւիրուած է բացառապէս բիւջէն հաստատելու համար և որ ձգտում է իւր նիստերն արտաքին քաղաքականութեան վերաբերեալ անընդհատ վիճաբանութիւններով։ Մինչև պարլամէնտական զեղարտներին Սէնտ-Ջէմի կաբինէտը կատարեալ աղաւաղութեամբ կը դրծէ և հեշտ կարող է պատահել, որ երեք պետութեանց շտապաւոր խորհուրդներին մինչև այն ժամանակ ընդդիմադրելը Դրան համար շատ դանդաղ վնասակար լինի։

Յօգուտ «Հաւասի»-ի այսօր հաղորդած լուրի ճշմարտութեանն է խօսում և յամառութեամբ պնդող այն լուրը, թէ Բեռլինի դաշնագրին ստորագրող, բայց Ռուսիայի, Անգլիայի և Ֆրանսիայի միջամտութեանն ուղղակի շմասնակցող պետութիւններն ևս այժմ խորհուրդ են տալիս սուլթանին, որ Հայաստանի համար առաջարկուած ռէֆորմների ծրագիրն ընդունէ։ Գերմանիայի շահն է, որ Անգլիան Թիւրքիայի վրայ իւր նախկին գերակշռող ազդեցութիւնը նորից ձեռք չբերի. ուստի և այդպիսի մի խորհուրդ Գերմանիայի կողմից բոլորովին հասկանալի է. և շատ հնարաւոր է, որ Բեռլինի կառավարութեան ցանկութեամբ նոյն խորհուրդը լինին տուած և Աւստրօ-Հունգարիայի ու Իտալիայի կառավարութիւնները։

Իսկ Կ. Պոլսի կառավարութիւնը շրջակէտ է ժամանակ կորցնել։ Անգլիայի պարլամէնտի նիստերը թէև անսպասելի կերպով ձգձգուեցան, բայց և այնպէս վերջանալու մօտ են։ Վաղը Սէնտ-Ջէմի կաբինէտը կարող է խօսել բոլորովին ուրիշ եղանակով, քան Ռուսիայի և Ֆրանսիայի հետ միասին գործելու անհրաժեշտութեան շնորհիւ՝ մինչև այժմ է խօսել։

Եթէ սուլթանը բարեհաճեցաւ Հայաստանն այնպէս, ինչպէս երեք պետութիւններն են խորհուրդ տալիս, Հայաստանը դարձեալ իւր անմիջական իշխանութեան ներքոյ կը մնայ. բայց տակաւին յայտնի չէ՝ թէ ինչ կը լինի, եթէ շարունակ ընդդիմանալով տաւիթ տայ Անգլիային միայնակ գործելու Թիւրքիայի դէմ այն սպառնական ձևով, որի մասին խօսում են վերոյիշեալ լուրերը և Լօնդոնի նախարարական շրջանի մօտ կանգնած մի քանի լրագրներ։

«ՆՈՎՈՅԷ ՎՐԷՄԻԱՅԻ» ՄԻ ՀԵՌԱԳԻՐ

ԼՕՆԴՕՆ.—25 օգոստոսի. Տորիների կուսակցութեան գժգոհութիւնը մարքիզ Սալզբուրիի քաղաքականութեան դէմ ստստկանում է. Նրան յանդիմանում են, թէ չկարողացաւ Գերմանիայի հետ մտերմանալ, թէ այդ պետութեան հետ դաշն կապելու փորձերը յաջողութեամբ չպսակուեցան, նրա պաշտպանութիւնը հայերին՝ քրիստոնեական ինքնապահպանութիւն են կոչում։ Հաւատարիմ լուրերին նայելով՝ Գերմանիային մօտենալու համար մարքիզ Սալզբուրիի գործ դրած փորձերը այն հետևանքն ունեցան, որ Անգլիայի և Գերմանիայի կառավարութեանց փոխադարձ անվստահութիւններն աւելի սուր կերպարանք ստացան. իսկ հայերին ջերմ պաշտպանութիւն ցոյց տալը վատթարացրեց և խստացրեց Անգլիայի և Թիւրքիայի յարաբերութիւնները։ Լսում է, թէ մարքիզ Սալզբուրին ստստացել է Դրանը՝ Թիւրքիան բաժան բաժան անելու։ Հաւատացնում են, թէ նոր եռապատական կաբինէտն ստիպուած կը լինի բռնի միջոցներ ձեռք առնել Թիւրք կառավարութեան դէմ, Արևելքում Անգլիայի վարկը փրկելու համար։

ԿԱՄԱԽՈՒ ԴԷՊՔԵՐԸ

Երիզայից ուղարկուած է Կ. Պոլիս, հայոց պատրիարքին, հետևեալ նոր տեղեկագիրը.

Ամենապատիւ Տ. Տ. Մատթէոս Սրբ. արքեպիսկոպոս Իզմիրլեան, ազգային պատրիարք հայոց Թիւրքիոյ

Ի Կ. Պոլիս

Բարձրաշնորհ Սրբ. հայր.

Յատուկ սուրհանդակաւ զրկուած ներկայ ամսոյս 6 և 7 թուականի երկու բողոքագրերն կը հաստատեմք։

Քաղաքիս եկեղեցւոյ հրապարակին վրայ վերջացող ամսոյս վերջընթեր աւուր (30 յուլիս, կիւրակի, ըստ Թիւրքաց), երեկոյեան ժամ 1—2-ի միջոցներուն սպաննուող 25 տարեկան մի հայ երիտասարդի մասին արդէն ընթացիկ ամսոյս 5 թուականի մի նամակաւ տեղեկագրուած է։

Այս դէպքին հետևեալ օրը, դէպի Քեմախ արքունի ճանապարհին վրայ՝ գայմակամ մը, քոլ-աղասի մը կը կոդոպտուին և չավուս մը կը սպաննուի։ Լուրը կայծակի արագութեամբ Քեմախ և Երիզա միանգամայն կը հասնին։ Դառնալուութիւնը և զինուորականութիւնը իբր թէ նոյն վայրին շրջակայ լեռները ապաստանող 17-ի չափ հայ-ասպատակներու վերագրելով՝ վերի վայր կը յուզուին, և կանոնաւոր զօրքերով ու պաշիպօզուքներով Սեղուհ լեռը՝ իբր հայ ասպատակաց բնակավայր՝ պաշարման վիճակի մէջ կը դնեն և ասպատակները ձերբակալելու կը հետամտեն։ Ի լրոյ կիմանամք, թէ Քեմախի Թահիր-փաշան հարիւրաւոր պաշիպօզուքներով, Կէրճանիսի-Կուճուռ-օղլի Համիտ-սէյ նոյնպէս իր կողմի 150 պաշիպօզուքներով, և մինչև իսկ Սիվազի կողմերէն խումբ մը չէրքէզ պաշիպօզուքներ անմիջապէս կը փութան նոյն վայրերը երթալ՝ աւելի կողոպտելու և յափշտակելու՝ քան իրական նպատակին ծառայելու։

Նոյն օրը տեղւոյս մէջ գտնուող չորրորդ զօրաբանակը գրեթէ ամբողջ շարժման մէջ կը դնեն. առժամայն քաղաքս պաշարման մէջ կը դրուի և աւելի քան 1000 հեծեալ և հետևակ զօրքերով նոյն լեռը կը շրջապատուի։ Անհնարին է նրկարագրել լեռան ստորոտը գտնուող մի քանի հայաբնակ գիւղերու (Գառնի, Դումեր, Թորթան, Թաւրկներ, Մարիկ, Հոռոփուլ, Ուրի և Բագաւիճներ) մէջ ի գործ դրուած ամենասոսկալի խժդժութիւնները կանոնաւոր զօրաց և պաշիպօզուքներու կողմանէ։ Բազմաթիւ հայեր, ամեն կարգի ու հասակի՝ բիրերու անողորմ հարուածներու տակ մահամերձ վիճակի կը մատնուին. կանանց պատիւը կը բռնաբարուի ու կը լիուի բարբարոս և անգութ խուժանին կողմէ. գիւղերը կը կողոպտուին, կանանց զարդեր և անական զոյքեր կը յափշտակուին. արդէն գիւղերու մէջ սպառած է ինչ որ ուտելի է։ Մոյն օրինակ խժդժութիւնք և անգթութիւնք կը շարունակուին դարձեալ նոյն գիւղերու մէջ. սակայն մանրամասն տեղեկութիւն չենք կրնար առնել, զի շրթայի տակ առնուած է և յարաբերութիւնք արգիլեալ։

Նոյն լեռանց մէջ գտնուող Աւագ-Վանք, Լուսաւորիչ և Ս. Յակոբ՝ թիւրք զօրաց սանակոն անհաւասար կը լլլան, մասնաւորապէս առաջի երկու մենաստանաց սրբավայրերուն սրբութիւնք կը պղծուին ու կանարգուին, վանօրէից բնակիչք ամենազգի դառն տանջանաց կենթարկուին։ Լուսաւորչայ վանուց վանապետն, որ արդէն հիւանդ՝ նոյն ատեն մահուան անկողինը կը ձգեն, իւր ծերունի մօր գլխուն կը տեղան սոսկալի հայհոյութիւններ ու սպառնալիքներ։ Հաղարապետ Եավէր էֆէնդի կրգուայ՝ «քեզ մաղերէդ վար կախել պիտի տամ. Սասունը կոտորողը ես եմ. վանքը քարիւղով պիտի այրեմ և ձեզ բոլորդ կենդանւոյն պիտի խորովիմ»։

Ս. Լուսաւորիչ վանքին գոյքերը բոլորովին կը թալանուին, կանանց մնդակները բանալով՝ կանացի զարդեր կը յափշտակեն։ Վանքի հովին ու մշակը ամենասոսկալի անգթութեամբ կը գանահարեն և կալանաւորած կը պահեն իրենց մէջ։ Նոյն շարաղէտ բաղդին ենթակայ կըլլայ նաև Աւագ-Վանք. հոն ևս նոյնօրինակ յափշտակութիւն և խժդժութիւնք տեղի կունենան, վանահօր որդոյմէ երեքը շարաչար խոշտանգելէ և գանահարելէ ետք կը կալանաւորեն։ Այժմ այս նշանակեալ հինգ կալանաւորներէն չորսը բոլորովին անյայտացուցած են, իբր թէ իրենց ձեռքէն փախուցած ըլլան։

Գալով 17 հայ երիտասարդաց՝ վեց օր շարունակ պաշարման հոծ շղթայի մը մէջ բոլորովին անսուաղ մնալով՝ կը ստիպուին կիւրակէ առաւօտ ժամ 9-ին իրենց ապատանարանէն դուրս գալ ձորը՝ ջուր խմելու համար. ահա կրակի պատերազմական փողերը հնչել, ամենուստ խմբի վրայ սոսկալի հրացանաձգութիւն մը կը սկսի, որ կը տևէ 5 ժամ։ Այդ կռուոյն մէջ երկու դիակ և երեք կալանաւոր ձեռք բերելով, քաղաքս կը բերեն ու կը բանտարկեն։

Միևնոյն օրը, նոյն լերանց շղթայի վրայ գտնուած Խալ գիւղէն՝ հօթն հատ ծխախոտի փախստական լացերու կը հանդիպին և իբր թէ՝ երեքը սպաննելով, չորսը կը կալանաւորեն։ Ստուգապէս չգիտցուիր, թէ գայմագամը և իրենները կողոպտողները հայեր են, թէ՝ այդ լացերը և կամ քիւրդ աւազակներ. սա միայն գիտենք հաւաստեաւ, որ կառավարութիւնը հայոց վերագրած է։ Նոյն դէպքին յաջորդեցին քաղաքիս մէջ բազմաթիւ խուզարկութիւնք և ձերբակալութիւնք։ Գիւղերէն մանրակրկիտ խուզարկութեան ենթարկուեցան՝ Կարմրի, Բալանլու և Սուրբ Օհան։ Ի լրոյ կիմանանք թէ՝ նոյն բաղդին պիտի արժանանան նաև մնացեալ շրջակայ բոլոր գիւղերն ու վանքերը և թերևս ամբողջ քաղաքս ալ։ Կարելի է դուշակել, թէ խուզարկութեանց ժամանակ ինչ խժդժութիւններ և յափշտակութիւններ չեն կատարուիր՝ մանաւանդ գիւղացի թշուառ և անպաշտպան ժողովրդեան վրայ։

Ձերբակալութիւնք կանին օրէ ցօր. կառավարութեան ընթացքէն խրախուսուած թիւրք մոլեռանդ ժողովուրդը առհասարակ գրգռուած և անհնարին զայրացած վիճակ մը ունի, այնպէս որ քրիստոնեայ հասարակութիւնը, սոսկալի ահ ու դողի մատնուած, վայրկեանէ վայրկեան ընդհանուր ջարդի մը սրհաւիրքն ունի։

Իրաց այս տագնապալի կացութեան մէջ է, որ ձեզ կը դիմենք, ամենապատիւ Տէր, և օգնութիւն կը հայցենք, օգնութիւն չատախտէ՝ զի թիւրք մոլեռանդութեան դէմ կատարելապէս անզէն ու անպաշտպան կը գտնուինք։ Գրթութիւն։

Յաւելուած։ — Թէև քաղաքիս համայն հայ հասարակութիւնը ի սրտէ կը փափաքէր ստորագրել ի ստորև, սակայն յայտնի պատճառներ անկարելի ըրին զայն։ Արդ մենք, խոնարհ ծառայքս, անարժանաբար նմանող մեր գերագոյն հովուապետին, չենք վարանիր մեր անձը դնել մեր ուխտարաց վրայ. զայս ևս յատուկ թղթաբերով կատարելիք առ ձերդ ամենապատուութիւն որդիական խոնարհ ակնածանօք, և կը խնդրենք դարձեալ գթութիւն և օգնութիւն։

Երկրորդ յաւելուած։—Ներփակեալ մանրամասն տեղեկագրին պատրաստուած վայրկենին, տեսնելով որ նորանոր դէպքեր տեղի կունենան, երկու օր ևս սպասելով՝ նոյն աւուրց պատահարներն ալ շարունակեցինք տեղեկագրել ի ստորև։

Օգոստոս 13—15-ին քաղաքիս մէջ ձերբակալութիւնք և խուզարկութիւնք խստիւ կը շարունակուին, առանց պատուոյ և ատիճանի խորութեան, և նոյն իսկ առանց նախնական հարցաքննութեան, որոյ առիթ տեղական բանտերը այս երեք օրերուն մէջ լցուեցան 30-էն աւելի հայ բանտարկեալներ, որոց զրեթէ կէսն քաղաքիս նշանաւոր ազգայիններէն են։

Սեղուհ ս. Լուսաւորչայ վանուց վանապետուհին (դուստր վանահայրն և առաջնորդ Զարդան վարդապետի) մայր Մարթայ՝ ձիաւոր զօրականներով քաղաք բերուելով՝ բանտարկեցին, իսկ սորա հարսը իւր անչափահաս մանկիկներով նոյն կողմի լեռները թողուցին տաճկաց բնակարաններն... Գալով հիւանդ որդւոյն՝ դեռ նոյն վիճակի մէջ, անտէր և անպաշտպան կը մնայ ս. Լուսաւորիչ վանուց մէջ, ուր տաճիկ զինուորներէ զատ ուրիշ ոչ ոք կայ։

Արդ՝ Ամենապատիւ Տէր, դայսոսիկ ևս խոնարհաբար մատուցանելով Ձեր հայրական խորին ուշադրութեանը՝ դարձեալ կը հայցեմք գթութիւն և օգնութիւն։

Համբուրիւ սրբացեալ աջոյ Ցեառնդ Ամենապատուութեան, մնամք խոնարհ որդիք՝

Առաջնորդական փոխանորդ Երիզայի

(Ստորագրութիւններ՝ 8 քահանայ և 1 բողոքական քարոզիչ)

1895 օգոստոսի 15.

Առաջ. Հայոց Երիզա։

(Կնիք)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Տերսկիէ Վեդ.» թերթի խմբագիր Նշանակուած է նախկին ուսագ գրաքննիչ իսկ. պետ. խորհ. Վ. Զ. Բեղօր. բաղոլը։

* * *

Առաջիկայ 1896 թուին տէրութիւնը ի թիւս ութը զանազան քաղաքների հեռախօս է հաստատելու նաև Փոթիում։

* * *

Զինուորական խորհրդի անդամ գեներալ Յակոբ Աշխազեանը մի քանի ժամանակ Թիֆլիզում մնալուց յետոյ, երէկ, օգոստոսի 31-ին, ուղևորուեցաւ Պետերբուրգ։

* * *

«Հանդէս Ամսօրեայ», „Русская Мысль“, „Вѣстникъ Европы“, „Міръ Божій“, „Трудъ“, „Вѣстникъ Воспитанія“. կիսամեայ հրատարակութիւն երեքը՝ «Արաքս», «Հանդէս Գրականաց» և «Թատրոն»։

Վերոյիշեալ պարբերական հրատարակութիւններից մէնից առաւել կարդացվում են օրաթերթերը, յետոյ շաբաթաթերթերը, իսկ ամենից սակաւ ամսագրերը։ Օրինակ, „Руская Мысль“ և „Вѣстникъ Европы“-ի նման առաջնակարգ հրատարակութիւնները այն աստիճան անուշադրութեան են մատնուած, որ շատ անգամ՝ ըստ վիճակագրական նոցա սեղանի վրայից վերցնում է առանց թղթերը կարտեալու։ Մենք էլ չենք ուզում խօսել „Вѣстникъ Воспитанія“, „Ремесленная Газета“ և „Вѣстникъ Русскаго Сельскаго Хозяйства“-ի նման մասնագիտական բնաւորութիւն ունեցող թերթերի թշուառ վիճակի մասին, որոնք նոյն դրութեամբ ինչպէս դուրս են գալիս տպագրական մամուլի տակից, նոյն դրութեամբ էլ մնում են գրասեղանները, կարծես, ընդ միշտ մոռացուելու համար։

Դրքերից առաւելապէս կարդացվում են վէպերը։ Գիտական բովանդակութիւն ունեցող գրքեր կարդացողների թիւը շատ անչնչին է և դա հասկանալի է, որովհետև ընթերցող հասարակութեան մեծ մասը հասարակ դասակարգին է՝ վաճառականներ, արհեստաւորներ և աշակերտներ։

Աւելորդ և անհետաքրքիր չենք համարում ընթերցող հասարակութեան մի չոչափելի գաղափար տալու համար այստեղ առաջ բերել մի աղիւսակ, որից պարզ կերևի, թէ անցեալ 1894 թուականին, որ դասակարգից որքան մարդ է այցելել գրադարանը.

Արհեստաւորներ	825 մարդ
Մանրավաճառներ. . . .	311 »
Վաճառականներ	899 »
Ծառայողներ	2194 »
Ուսուցիչներ	2181 »
Աշակերտներ	1272 »
Անյայտ	2277 »
Կին	179 »

Ընդամենը 10,136 մարդ։

Ինչպէս մեր այս աղիւսակից կարելի է եզրակացնել, անցեալ 1894 թուականին իւրաքանչիւր ամիս միջին թուով այցելել է գրադարան մօտ 845 մարդ, որ կանի օրական մօտ 28 մարդ, իսկ այս տարի յաճախորդների թիւն զգալի կերպով շատացել է և օրական հասնում է մինչև 40-45-ի, ինչպէս այդ կարելի է հետևցնել ներկայ տարուայ փետրուար ամսում յաճախորդների ցուցակից, որ առաջ կը բերենք այստեղ.

Արհեստաւորներ	151 մարդ
Մանրավաճառներ	25 »
Վաճառականներ	170 »
Ուսուցիչներ	276 »
Զինուորականներ և ծառայող.	264 »
Աշակերտներ	103 »
Անյայտ անձինք	216 »
Կին	41 »

1246 մարդ,

այսինքն օրական 41,5 մարդ։

Այս հանգամանքը կարելի է բացատրել երկու պատճառով. առաջին և գլխաւոր պատճառը հայկական հարցն է, որ անխիղճ հետաքրքրում է բոլոր դասակարգերին, ինչպէս այդ պարզ երևում է մեր վերևում զետեղած աղիւսակներից, և երկրորդ մուտքի վճարը երեք կոպէկից մէկ կոպէկ դարձնելը։

Ինչպէս ընթերցողը տեսնում է, աչքի է ընկնում միայն կանանց բացակայութիւնը։ Նախ պէտք է նկատել, որ Ախալցխայի կինը արևելեան Կովկասի հայ կնոջ նման կաշկանդուած չէ այլ և այլ աւանդական կամ օտարներից իւրացրած յուզականութեան վերաբերեալ անընդհատ վիճաբանութիւններով։ Միայն պարլամէնտական զեղարտներին Սէնտ-Ջէմի կաբինէտը կատարեալ աղաւաղութեամբ կը դրծէ և հեշտ կարող է պատահել, որ երեք պետութեանց շտապաւոր խորհուրդներին մինչև այն ժամանակ ընդդիմադրելը Դրան համար շատ դանդաղ վնասակար լինի։

Յօգուտ «Հաւասի»-ի այսօր հաղորդած լուրի ճշմարտութեանն է խօսում և յամառութեամբ պնդող այն լուրը, թէ Բեռլինի դաշնագրին ստորագրող, բայց Ռուսիայի, Անգլիայի և Ֆրանսիայի միջամտութեանն ուղղակի չմասնակցող պետութիւններն ևս այժմ խորհուրդ են տալիս սուլթանին, որ Հայաստանի համար առաջարկուած ռէֆորմների ծրագիրն ընդունէ։ Գերմանիայի շահն է, որ Անգլիան Թիւրքիայի վրայ իւր նախկին գերակշռող ազդեցութիւնը նորից ձեռք չբերի. ուստի և այդպիսի մի խորհուրդ Գերմանիայի կողմից բոլորովին հասկանալի է. և շատ հնարաւոր է, որ Բեռլինի կառավարութեան ցանկութեամբ նոյն խորհուրդը լինին տուած և Աւստրօ-Հունգարիայի ու Իտալիայի կառավարութիւնները։

Իսկ Կ. Պոլսի կառավարութիւնը շրջակէտ է ժամանակ կորցնել։ Անգլիայի պարլամէնտի նիստերը թէև անսպասելի կերպով ձգձգուեցան, բայց և այնպէս վերջանալու մօտ են։ Վաղը Սէնտ-Ջէմի կաբինէտը կարող է խօսել բոլորովին ուրիշ եղանակով, քան Ռուսիայի և Ֆրանսիայի հետ միասին գործելու անհրաժեշտութեան շնորհիւ՝ մինչև այժմ է խօսել։

Եթէ սուլթանը բարեհաճեցաւ Հայաստանն այնպէս, ինչպէս երեք պետութիւններն են խորհուրդ տալիս, Հայաստանը դարձեալ իւր անմիջական իշխանութեան ներքոյ կը մնայ. բայց տակաւին յայտնի չէ՝ թէ ինչ կը լինի, եթէ շարունակ ընդդիմանալով տաւիթ տայ Անգլիային միայնակ գործելու Թիւրքիայի դէմ այն սպառնական ձևով, որի մասին խօսում են վերոյիշեալ լուրերը և Լօնդոնի նախարարական շրջանի մօտ կանգնած մի քանի լրագրներ։

«ՆՈՎՈՅԷ ՎՐԷՄԻԱՅԻ» ՄԻ ՀԵՌԱԳԻՐ

ԼՕՆԴՕՆ.—25 օգոստոսի. Տորիների կուսակցութեան գժգոհութիւնը մարքիզ Սալզբուրիի քաղաքականութեան դէմ ստստկանում է. Նրան յանդիմանում են, թէ չկարողացաւ Գերմանիայի հետ մտերմանալ, թէ այդ պետութեան հետ դաշն կապելու փորձերը յաջողութեամբ չպսակուեցան, նրա պաշտպանութիւնը հայերին՝ քրիստոնեական ինքնապահպանութիւն են կոչում։ Հաւատարիմ լուրերին նայելով՝ Գերմանիային մօտենալու համար մարքիզ Սալզբուրիի գործ դրած փորձերը այն հետևանքն ունեցան, որ Անգլիայի և Գերմանիայի կառավարութեանց փոխադարձ անվստահութիւններն աւելի սուր կերպարանք ստացան. իսկ հայերին ջերմ պաշտպանութիւն ցոյց տալը վատթարացրեց և խստացրեց Անգլիայի և Թիւրքիայի յարաբերութիւնները։ Լսում է, թէ մարքիզ Սալզբուրին ստստացել է Դրանը՝ Թիւրքիան բաժան բաժան անելու։ Հաւատացնում են, թէ նոր եռապատական կաբինէտն ստիպուած կը լինի բռնի միջոցներ ձեռք առնել Թիւրք կառավարութեան դէմ, Արևելքում Անգլիայի վարկը փրկելու համար։

ԿԱՄԱԽՈՒ ԴԷՊՔԵՐԸ

Երիզայից ուղարկուած է Կ. Պոլիս, հայոց պատրիարքին, հետևեալ նոր տեղեկագիրը.

Ամենապատիւ Տ. Տ. Մատթէոս Սրբ. արքեպիսկոպոս Իզմիրլեան, ազգային պատրիարք հայոց Թիւրքիոյ

Ի Կ. Պոլիս

Բարձրաշնորհ Սրբ. հայր.

Յատուկ սուրհանդակաւ զրկուած ներկայ ամսոյս 6 և 7 թուականի երկու բողոքագրերն կը հաստատեմք։

Քաղաքիս եկեղեցւոյ հրապարակին վրայ վերջացող ամսոյս վերջընթեր աւուր (30 յուլիս, կիւրակի, ըստ Թիւրքաց), երեկոյեան ժամ 1—2-ի միջոցներուն սպաննուող 25 տարեկան մի հայ երիտասարդի մասին արդէն ընթացիկ ամսոյս 5 թուականի մի նամակաւ տեղեկագրուած է։

Այս դէպքին հետևեալ օրը, դէպի Քեմախ արքունի ճանապարհին վրայ՝ գայմակամ մը, քոլ-աղասի մը կը կոդոպտուին և չավուս մը կը սպաննուի։ Լուրը կայծակի արագութեամբ Քեմախ և Երիզա միանգամայն կը հասնին։ Դառնալուութիւնը և զինուորականութիւնը իբր թէ նոյն վայրին շրջակայ լեռները ապաստանող 17-ի չափ հայ-ասպատակներու վերագրելով՝ վերի վայր կը յուզուին, և կանոնաւոր զօրքերով ու պաշիպօզուքներով Սեղուհ լեռը՝ իբր հայ ասպատակաց բնակավայր՝ պաշարման վիճակի մէջ կը դնեն և ասպատակները ձերբակալելու կը հետամտեն։ Ի լրոյ կիմանամք, թէ Քեմախի Թահիր-փաշան հարիւրաւոր պաշիպօզուքներով, Կէրճանիսի-Կուճուռ-օղլի Համիտ-սէյ նոյնպէս իր կողմի 150 պաշիպօզուքներով, և մինչև իսկ Սիվազի կողմերէն խումբ մը չէրքէզ պաշիպօզուքներ անմիջապէս կը փութան նոյն վայրերը երթալ՝ աւելի կողոպտելու և յափշտակելու՝ քան իրական նպատակին ծառայելու։

Նոյն օրը տեղւոյս մէջ գտնուող չորրորդ զօրաբանակը գրեթէ ամբողջ շարժման մէջ կը դնեն. առժամայն քաղաքս պաշարման մէջ կը դրուի և աւելի քան 1000 հեծեալ և հետևակ զօրքերով նոյն լեռը կը շրջապատուի։ Անհնարին է նրկարագրել լեռան ստորոտը գտնուող մի քանի հայաբնակ գիւղերու (Գառնի, Դումեր, Թորթան, Թաւրկներ, Մարիկ, Հոռոփուլ, Ուրի և Բագաւիճներ) մէջ ի գործ դրուած ամենասոսկալի խժդժութիւնները կանոնաւոր զօրաց և պաշիպօզուքներու կողմանէ։ Բազմաթիւ հայեր, ամեն կարգի ու հասակի՝ բիրերու անողորմ հարուածներու տակ մահամերձ վիճակի կը մատնուին. կանանց պատիւը կը բռնաբարուի ու կը լիուի բարբարոս և անգութ խուժանին կողմէ. գիւղերը կը կողոպտուին, կանանց զարդեր և անական զոյքեր կը յափշտակուին. արդէն գիւղերու մէջ սպառած է ինչ որ ուտելի է։ Նոյն օրինակ խժդժութիւնք և անգթութիւնք կը շարունակուին դարձեալ նոյն գիւղերու մէջ. սակայն մանրամասն տեղեկութիւն չենք կրնար առնել, զի շրթայի տակ առնուած է և յարաբերութիւնք արգիլեալ։

Նոյն լեռանց մէջ գտնուող Աւագ-Վանք, Լուսաւորիչ և Ս. Յակոբ՝ թիւրք զօրաց սանակոն անհաւասար կը լլլան, մասնաւորապէս առաջի երկու մենաստանաց սրբավայրերուն սրբութիւնք կը պղծուին ու կանարգուին, վանօրէից բնակիչք ամենազգի դառն տանջանաց կենթարկուին։ Լուսաւորչայ վանուց վանապետն, որ արդէն հիւանդ՝ նոյն ատեն մահուան անկողինը կը ձգեն, իւր ծերունի մօր գլխուն կը տեղան սոսկալի հայհոյութիւններ ու սպառնալիքներ։ Հաղարապետ Եավէր էֆէնդի կրգուայ՝ «քեզ մաղերէդ վար կախել պիտի տամ. Սասունը կոտորողը ես եմ. վանքը քարիւղով պիտի այրեմ և ձեզ բոլորդ կենդանւոյն պիտի խորովիմ»։

Ս. Լուսաւորիչ վանքին գոյքերը բոլորովին կը թալանուին, կանանց մնդակները բանալով՝ կանացի զարդեր կը յափշտակեն։ Վանքի հովին ու մշակը ամենասոսկալի անգթութեամբ կը գանահարեն և կալանաւորած կը պահեն իրենց մէջ։ Նոյն շարաղէտ բաղդին ենթակայ կըլլայ նաև Աւագ-Վանք. հոն ևս նոյնօրինակ յափշտակութիւն և խժդժութիւնք տեղի կունենան, վանահօր որդոյմէ երեքը շարաչար խոշտանգելէ և գանահարելէ ետք կը կալանաւորեն։ Այժմ այս նշանակեալ հինգ կալանաւորներէն չորսը բոլորովին անյայտացուցած են, իբր թէ իրենց ձեռքէն փախ

ՍԱՆԱՀՆԻՑ մեզ գրում են.—Թեմիս սրբազան առաջնորդ Գէորգ արք.-եպիսկոպոս Սուրէնեանցը ամսոյս (օգոստոսի) 8-ից մինչև 20-ը շրջագայեց Լոռուայ վիճակի հայ գիւղերը, զննութեան առնելով բոլոր եկեղեցիք։ Ամենից առաջ նորին Բարձր Սրբազնութեան այցելութեան արժանացած են Բուն-Լոռուայ հովտի, գետի աջ և ձախ գտնուած գիւղերը, յետոյ Դսեղը իւր շրջակայ բնակատեղիներով, հին Տաշիրի (այժմեան Օձնայ) տափի վրայ գտնուած գիւղերը և ապա Զորագետի Նշանաւոր հնավայր Սանահինը։ Ամենայն տեղ Սրբազան հօրը շատ պատուական և ուրախալից կերպով են ընդունել։

Սրբազան հօր պարզ և ուրախ բնաւորութիւնը բոլոր գիւղականների և պաշտօնեաների սիրան է գրաւել։

* * *

ՕՁՈՒՆԻՑ մեզ գրում են.—Օձնայ եկեղեցական դպրոցի շինութիւնը շատ անյարմար է և միանգամայն անհամապատասխան կանոններին։ Գիւղը ունենալով մեծ բնակութիւն, բաւականին թուով էլ տարեկան աշակերտացուներ է տալիս, որոնք ուսանում են վերոյիշեալ շինութեան մէջ։ Վերջինիս պակասութիւնը ի նկատի ունենալով, բնիկ օձնեցի, իսկ այժմ վանահայր Սանահնի վանքի բարեշնորհ Վարդան վարդապետ Վարդանեանցը ցանկացաւ մի առանձին տեղ, եկեղեցուց բաւական հեռու, հին գեղեզմանատան մօտիկ, մի պատուական և ընդարձակ վայրում ուսումնարան շինել, երկյարկանի, իւր սեպհական ծախսով, որ և նուիրելու է տեղւոյս եկեղեցուն իբրև ուսումնարանի շէնք։ Շինութիւնն արդէն վերջացած է, միայն մի քանի պակասութիւններ կան լրացնելու, որոնց ի գլուխ ածելուց զնի հայր-սուրբը գրաւոր կերպով դիմելու է Վեհափառ Հօրը՝ իւր նուէրը ընդունելու յօգուտ Օձնայ եկեղեցւոյ և յանուն զիւղական «Վարդանեան» յոբջորջելի ուսումնարանի։ Շատ ցանկալի կը լինի, որ հայր սուրբը հեռատեսաբար վաղօրօք իւր բարի մտադրութիւնը ի գլուխ հանէ, որով և՝ իւր անունը անմոռանալի կը մնայ գիւղի հայ հասարակութեան մէջ որդէց որդի։

* * *

ԴԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Վերջապէս ուսումնական տարուանից առաջի երկու շաբաթները խլելով (իբր թէ ամարային արձակուրդները հերիք չէին) քաղաքիս երկդասեան ուսումնարանի յոգնաջան հոգաբարձուները բարեհաճեցին այդ խարխլուած ու կիսափուլ շինութեան նորոգութեանը ձեռնարկել։ Թէև ներկայ շէնքը ամբողջապէս այնքան կոպէկ էլ չարժէ, որքան մանէթ կը ծախսուի նորա տանիքի նորոգութեան համար, և թէև այդ նորոգուած (՞) շէնքը դեռ կարելի է համեմատել բօշաների հազար տեղից գոյնզգոյն կտորներով կարկատած վերարկուների հետ, բայց ինչպէս երևում է հոգաբարձութեան տրամադրութիւնից, այս զառամեալ շինութիւնը դեռ շատ տարիներ պէտք է շարունակէ «ուսումնարան» անունը կրել իւր վրայ։

* * *

ԿՕՋՕՐԻՑ մեզ հաղորդում են.—Ամսոյս 20-ին Կօջօրի հայոց եկեղեցու գաւթում կայացաւ ամառանոցակ հայ ծխականների ժողովը, նախագահութեամբ Տէր-Գրիգոր քահանայի։ Պ. Երեսփոխան Ա. Շահ-Ազիզեանցը եկեմտից մանրամասն հաշիւ ներկայացնելուց յետոյ յայտնեց որ նորա երեսփոխանական ժամանակամիջոցը լրացած լինելով, խնդրում է ընտրել մի ուրիշ երեսփոխան։

Ժողովը, յայտնելով իւր շնորհակալութիւնը պ. Շահ-Ազիզեանին, նորա մատուցած ծառայութեան համար յօգուտ՝ եկեղեցւոյ, միաձայն վերընտրեց նորան դարձեալ երեսփոխան երկու տարի ժամանակով։

Պ. Շահ-Ազիզեանը, ընդունելով այդ վերընտրութիւնը, զգացուած յայտնեց իւր խորին շնորհակալութիւնը և առաջարկեց ժողովին միջոցներ ձեռնարկել Կօջօրի եկեղեցին մեծացնելու, որովհետև նորա ներկայ փոքրիկ դիրքը չէ համապատասխանում ծխականների տարէց տարի աճող բազմութեան։

Որոշեցին՝ ընտրել մի մասնախումբ որ և պիտի աշխատէ երեսփոխանին ի կատար ածելու նորա առաջարկութիւնը։

Ապա բազմութեամբ ձայնի ընտրուեցան անդամներ յիշեալ մասնախմբի՝ պ. պ. Գէորգ Դաւթեանց, Գէորգ Յակոբեանց, Աստուած Տէր-Յակոբեանց, բժշկապետ Դ. Տէր-Գրիգորեանց, Գ. Իզիլխանեանց, Խ. Արզումանեանց և ինքը՝ պ. Շահ-Ազիզեանցը։

* * *

Բագուում ներկայումս, ինչպէս հաղորդում է «Կասպի» լրագիրը, գտնվում է ատուածաբանութեան դօքտոր միստեր Բեդեկէրը, որ իւր ամբողջ կեանքը են հարստութիւնը նուիրել է քանտերում կալանաւորուած թշուառ յանցաւորներին։ Դօքտոր Բեդեկէրը 60 տարեկան հասակը անցած մի ծերունի է։ Նա այցելած է եւրոպական երկրների բանտերը և այժմ ճանապարհորդում է Կովկասում, ուր նորա ասելով բազմացել և բազմալեզու ազգաբնակութեան շնորհիւ իւր գործունէութեան համար մեծ ասպարէզ կայ։

Նա իւր հետ ունի մեծ քանակութեամբ փոքրիկ խաչեր, աւետարաններ՝ ամեն լեզուներով, այլև ատուածաբանական բովանդակութիւն ունեցող գրքեր, և այս քանակութիւնը, յանցաւորներին յիշեալ գրքեր բաժանելու համար, անընդհատ լրացվում է։

Բնիկների հետ պ. Բեդեկէրը զրոյց է անում իւր թարգման պ. Կարդէլի միջնորդութեամբ։

Բագուից դօքտորը մոգդրութիւն ունի ուղեորուել Շամախի, այնուհետև Զուշի, Գանձակ և դէպի հարաւային սահմանը, ապա հիւսիսային Կովկաս և Դաղստան։

* * *

Ստացանք Բաֆֆի «Հարցումար» վէպը, որ լոյս է տեսնում առաջին անգամ տիկին Բաֆֆի հրատարակութեամբ։ Հեղինակի յառաջաբանից իմանում ենք, որ այդ վէպը գրուած է 1871 թուին։ Դեռ 1874 թուին տպանդաւոր վիպագրողը տպագրութեան տալով «Փունջեր»-ի երկրորդ հատորը, ուր մի քանի պատկերներ կան Թիֆլիզի կեանքից, յառաջաբանի մէջ ընթերցողներին յայտնում էր, թէ ինքը նոր է մտել Թիֆլիզ և նոր է ծանօթանում այդտեղի հայկական կեանքին։ «Հարցումար» վէպը՝ որ «Փունջեր»-ից առաջ է գրուած, ցոյց է տալիս, թէ որքան սուր դիտելու ընդունակութիւն է ունեցել Բաֆֆին, որ կարճ ժամանակ մնալով Թիֆլիզ, կարողացել է կեանքի խորքը թափանցել և նրա մի քանի գծերը բաւականին ճիշտ նկարագրել։

Այդ վէպի մասին մենք առաջիկայում կը խօսենք։ Գիրքը 2 ռուբ. արժէ։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՆ

Եթէ եւրոպական անկախ մամուլը չէ խնայում հարուածներ տալ Թիւրքիային, մերկացնել այդ երկրում կատարուող անթիւ չարիքները, փոխարէնը տաճկական կառավարութիւնը կարող է մխիթարուել, որ պարսից մամուլը (այդպիսի մամուլ էլ կայ աշխարհիս երեսին) խօսքեր չէ գտնում տաճկական վարչութիւնը փառաբանելու։ Ընթերցողին մի գաղափար տալու համար տաճկական լրագրների այդ արժանաւոր դաշնակցի, նորա զապտիարների և գործածած ոճի մասին, թարգմանօրէն առաջ ենք բերում «Այստար» լրագրի հայհացքը մակեդոնեան շարժման գործիչների վրայ.

«Բոլղարները, որ շնորհիւ Աստուծոյ և Օսմանեան մեծ պետութեան այսօր կեանք են վայելում՝ անհաւատարմութեան ճանապարհի վրայ կանգնած, հակառակ և ճշմարտութիւն չճանաչող ընթացք են ընդունել։ Այս միջոցին այդ ազգի մի քանի չարագործներ՝ սպանութեան և խռովութեան զրօչակը ձեռքներին, անհաւատարմութեան և երդմնազանցութեան ցոյցեր են անում և ամեն կողմից ու անկիւններից արշաւում են Աստուածապահ տէրութեան վրայ և ամենուրեք տարածում սուր, հուր և կոտորած։ Ուր որ նրանք երևում են՝ պահապան զօրքերի կողմից ընդդիմադրութիւն ստանալով, հալածվում են օսմանեան պետութեան սահմանից, կամ զերի են դառնում, կամ իբրև ադուէսներ առիւծների առաջ առանց տալու առնելու փախուստ են տալիս։

Լրագիրների ասելով իւրաքանչիւր օր այդ անիրաւներից մի քանիսը յաղթուած զօրքի ուժից իբրև աւազակներ Սայօնիկ են տարվում։ Ցիշեալ լրագրները ասում են, որ այդ արիւնարբու գազանները բռնակալութեան աստիճանին հասած՝ չեն խղճում ոչ մարդու և կնոջ, ոչ ծերի ու երիտասարդի և ոչ մեծ ու փոքրի։ Մինչև գերի առնուածները օսմանեան զօրքի և ժանդարմների բարութիւնից և հեզութիւնից անչափ գոհ մնացած՝ զղջում են իրանց արածները։

Զարմանալի է, որ այն մարդիկ, որոնք բարձրագոչ աղաղակում են՝ ընդդէմ ամենայն հալածանքի և բարեկամ են հանդիսանում մարդկութեան խաղաղութեան և լուսաւորութեան, ականջները բամբակ կոխած մարդասիրութեան դէմ գործած այդ անիրաւութեան մասին ձայն չեն հանում։ Իսկ փառաւորած օսմանեան տէրութիւնը այդ չարագործ և բռնակալ գերիներին ցոյց է տալիս ըստ կարելւոյն իր սովորական շնորհն ու բարութիւնը։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՈՒՇ օգոստոս 18.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Այսօր ամբողջ քաղաքը ծածկուած է շլենականներով։ Նոցանից սմանք եկեր են բոլորելու հարկահաւաք ոստիկանների անլսելի և անտեսանելի կոպիտ վարք ու վարուեցողութեան դէմ, և սմանք ևս, որ մեծագոյն մասը կը կազմէ, հարկահաւաք զապթիաներից են վարած՝ իրանց անասուններով հանդերձ։ Մարդկանց բերեր են քանտարկելու և բատարկութեան տանջանքներով տուրքեր ստանալու. իսկ նոցա անասունները՝ կիսատնով ի վաճառ հանելու և արքունական տուրք գանձելու համար։ Հարկահաւաք զապթիաների ամենատգի կամայականութեանց, իմիջի այլ զիւղերի, նախ ենթարկուեր Ցուման հայաբնակ գիւղը։ Այդ տեղ զապթիաները նախ մերկացրեր են պարտատէր մարդկանց—անխտիր այր և կին—, հատ պարանոցներով փաթաթեր են սներին և ապա տաք ու սառ ջուր ածելով նոցա վրայ սկսեր են ենթարկել մըտրակի հարուածների։

Մարդկանց ազգերը անզօր է եղեր զապթիաների սիրտը մեղմութեան բերել։ Գիւղացիք միահամուռ ձայնիւ աղաչեր են նոցանից, որ 5 օր ժամանակ տրուի իրանց և 3000 զուրշի փոխարէն այժմ ստացուի միայն 1000 զուրշ, իսկ մնացեալ 2000՝ կալուցից յետոյ։ Դարձեալ անկարելի է եղեր։ Եւ ահա այդ դառն պայմանների տակ անգամ զերծ չեն մնացեր նոցա չվթայակապ դէպի Մուշ վարելու դժբախտութիւնից։

Անտարակոյս շատ տանջանք գիւղացու համար կարելի է տանելի համարել, իսկ այսօր, երբ «օձն իւր ձագին ջուր տալու ժամանակ չունի» նա իւր կենսալիր ու առնին զբաղմունք թողած գայ և ամիսներով տառապի բաղաքի փողոցներն ու բանտ։ Այդ արդէն անտանելի կը թուի նորան։

Այս դեռ ոչինչ, երբ համեմատելու լինինք հայ-կաթոլիկ գիւղերի բնակչութեան կրած տանջանքների ու անարգանքների հետ, որոնց նորա ևս մատնուեցան։

Մուշն ու նորա ընդարձակ դաշտը հաղիւ 3-4 հայ-կաթոլիկ գիւղեր ունին։ Նորա մինչև վերջին ժամանակները բաւականաչափ զերծ էին մահմեդականաց, մանաւանդ պաշտօնէից, հալածանքներից ու հարուածներից՝ քան լուսաւորչական հայերն ու հայրոսրականները։ Սոքա աւելի սիրելի և հաւատարիմ էին կառավարութեան, երբ յայտնի չարագործ Մուսաբէկի դժոխային ձեւի գործ դրած տանջանքն հանրագրերով կեղծել, ստել կը ջանային՝ մեղաւոր և յանցապարտ դուրս բերելով դարձեալ իրանց արենակից հայ եղբայրներին ևս առաւել բորբոքելու համար, ըստ կրսաւ հայերի այդ գաղթը նոցա պետերի մօտ կամ շէյխերի ու մոլլաների բերանով լուսաբանել զանազան ձեւերով ու մաքերով։ Ըստ կուզեմ այնպիսի հայեցակէտերով, որպէս թէ համիդիականները երբ անտարբեր գտնուին, հայերին պիտի յաջողի զրկել նոցա իրանց դարաւոր աւանդական իրաւունքներից, հողից, ջրից, և վերջապէս համարեա մարդկային ամենատարրական իրաւունքներից։

Համիդիականները անսալով իրանց նենգ կրօնակից բարեկամին չափազանցրին իրանց ատելութիւնն ու թշնամանք դէպի ողորմելի հայերը, դէպի մի տարր, որի հացով, ջրով և ճակտի քրտամբ դարերու ընթացքում ապրել են նոքա, ինչպէս և տիրող ապերախտ կառավարութիւնը...Այդ ատելութեանը մի որոշ սահման դնելու և կամ մի դադար տալու համար հերիք կը լինի ասել, որ ամեն պատահածին, ինչ հային կը վերաբերի, նորա ջանք և միջոց չէին խնայի մնասելու և վանդալու նորան։

Այդ ժամանակներին էր, որ Խաչու գիւղի ամբողջ նախիրը, որ բաղկացած էր մօտ 1500 գլուխ անասուններից, համիտականները յափշտակեցին։ Նոյնպէս Խայապէկ գիւղի ոչխարաց հօտ, որի քանակութիւնը անց էր 1000-ից՝ յափշտակեցին։ Խաչու և Խայապէկ գիւղերը, որ բաղդակից եղան, հաղիւ մէկ ժամուայ հեռաւորութիւն ունին միմեանցից։ Թոփրա-Կալէի բնակիչ Զաքարեան Բարսեղ և Նալբանդեան Մուքիաս աղաների գոմերը, որ Թոփրա-Կալէից կէս ժամուայ հեռաւորութեան վրայ էր կառուցուած, ուղղակի հազարաւոր ոչխարների վրայ հրդեհեցին։ Համիտականներէն չորս հոգի, Խոզուզ գետի եղերքին, բռնեցին Մօլլա-Սլէյման գիւղի հայ կաթոլիկ քահանան, որ Թոփրա-Կալէից կը վերադառնար իւր տուն, մերկացնելով նորան իւր զգեստներից, ունեցածից և ժամացուցից, ազատ կարձակեն։ Ողորմելի քահանան կրած զրկանքներից և անարգանքներից հաղիւ հազ ապրեցաւ մի շաբաթ և ի Տէր փոխուեցաւ... անշուշտ ի նախատինս քրիստոնեայ ազգին և թրքամոլ Ազարեան պատրիարքին։ Այդ ժամանակներին էր, որ Թոփրա-Կալէի և Մօլլա-Սլէյման գիւղի միջավայրը համիդիականները չարաչար տանջանօք սպանեցին Բուր կամ Ելնթափայ գիւղի երիտասարդներից Վարդան անունով մէկը։ Դժբախտ Վարդանի գերեզմանը այս բոպէիս կարծես ուխտատեղի է դարձած տեղային ժողովրդի կողմից։ Իւրաքանչիւր այդ մտական նախարարութեան կողմէ տրուած պատասխան սա է թէ Մեջլիսը իտարէները, որոնք պետական խորհրդին մէկ որոշումին համեմատ ձեռնհաս եւ պարտաւոր են ծախու հանել հարկապարտներու ստացուածքը, պարտին իրենք գրել և գրկել վերոյիշեալ ազգաբարգրիրը և յետոյ ձեռնարկել պարտապանին ստացուածքին վաճառման»

Սակայն լսողն ով, գործադրողն ով։

Այսպէս եղաւ ժողովրդի վիճակը, երբ քննիչ յանձնաժողովը մեկնեց Մուշը և հեռացաւ նորանից, երբ լսելի դարձած բարենորոգմանց ծրագիրը 'ի չիր դառնալու նշաններ ցոյց տուաւ։ Այս կերպ դառն և աղիողորմ է ահա թէ երկրագործ թէ բաղաքացի ժողովրդի ներկայ դրութիւնը։ Գուցէ հասարակութիւնից ոմանք, որոնց խղճի գոյութիւնը այնքան է, որքան մի մահմեդականի բթացած զգացմունք, կուրացած միտք, սոցա կանուանէ հանապազեայ կրկնութիւն կամ չափազանցեալ։ Ողորմելիներ, տեսնել պէտք է և ոչ կարդալ ու զրել։ Իսկ ամեն հանգամանքի առաջ կուրանալ։

Ռէհվի-Քուվի։

ՕՐԴՈՒ, 25 օգոստոսի.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Գործը երթալով կը ծանրանայ։ Զաքիր փաշան իւր առաջին կոմիսէր տաճկայ կողմէ կը խրկուի ահա իւր քննիչ յանձնաժողովը լծուցեց Մուշը և հեռացաւ նորանից, երբ լսելի դարձած բարենորոգմանց ծրագիրը 'ի չիր դառնալու նշաններ ցոյց տուաւ։ Այս կերպ դառն և աղիողորմ է ահա թէ երկրագործ թէ բաղաքացի ժողովրդի ներկայ դրութիւնը։ Գուցէ հասարակութիւնից ոմանք, որոնց խղճի գոյութիւնը այնքան է, որքան մի մահմեդականի բթացած զգացմունք, կուրացած միտք, սոցա կանուանէ հանապազեայ կրկնութիւն կամ չափազանցեալ։ Ողորմելիներ, տեսնել պէտք է և ոչ կարդալ ու զրել։ Իսկ ամեն հանգամանքի առաջ կուրանալ։

Ռէհվի-Քուվի։

ՕՐԴՈՒ, 25 օգոստոսի.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Գործը երթալով կը ծանրանայ։ Զաքիր փաշան իւր առաջին կոմիսէր տաճկայ կողմէ կը խրկուի ահա իւր քննիչ յանձնաժողովը լծուցեց Մուշը և հեռացաւ նորանից, երբ լսելի դարձած բարենորոգմանց ծրագիրը 'ի չիր դառնալու նշաններ ցոյց տուաւ։ Այս կերպ դառն և աղիողորմ է ահա թէ երկրագործ թէ բաղաքացի ժողովրդի ներկայ դրութիւնը։ Գուցէ հասարակութիւնից ոմանք, որոնց խղճի գոյութիւնը այնքան է, որքան մի մահմեդականի բթացած զգացմունք, կուրացած միտք, սոցա կանուանէ հանապազեայ կրկնութիւն կամ չափազանցեալ։ Ողորմելիներ, տեսնել պէտք է և ոչ կարդալ ու զրել։ Իսկ ամեն հանգամանքի առաջ կուրանալ։

Ռէհվի-Քուվի։

այնքան որ անտանելի վիճակի մէջ էին, վճռեցին նոյնպէս, որ իւրաքանչիւր գիւղից մի-մի ներկայացուցիչ գայ և որպէս պատգամաւոր անցնի Պարսկաստան տրեգակնափայլ Շահին ներկայանալու և նրանից գաղթավայրեր խնդրելու։ Ցաջող պարագային, երբ Շահը հաճութիւն տայ, պիտի գաղթէին այնտեղ 1000 տուն։ 30 հոգուց բաղկացած պատգամաւորութիւնը, գաւառական ընդհանուր ժողովի կարգադրութեամբ, այդ թուականների փետրուար ամսին մեկնեցաւ դէպի Բայազիտ, որտեղից պիտի անցնէր Պարսկաստան։ Լուր կը հասնի Բայազիտի միւթէսէրիֆ փաշային։ Նա անմիջապէս բոլորին ևս հրաւիրելով իւր մօտ գրաւոր կերպով նոցա գաղթելու պատճառ կուզէ իմանալ։ Հայ պատգամաւորները կը կատարեն կուսակալի պահանջը։ Նոքա միւթէսէրիֆ փաշային ներկայացած թղթով իրանց ուշադրութիւնն աւելի կը սևեռեն Թոփրա-Կալէում բնակուող յայտնի գաղանաբարոյ Ամմէտ-բէկի վրայ, քան միւս համիդիականների, որոնց ցեղապետն է ինք՝ Ամմէտ-բէկը։

Ամմէտ-բէկը այսօր ևս դեռ յայտնի է իւր աւերիչ, զրկող և հալածող արարքներով, ինչ որ էր առաջ. այսօր ևս բռնութեամբ դեռ կը շարունակէ տիրել հայ երկրագործի կալուածներին և ստացուածներին, ինչպէս որ տիրացած էր նա տարիներու ընթացքում։

Փաշային, յատուկ օսմանեան խորամանկութեամբ, կը յաջողի համոզել պատգամաւորները. իսկ Ամմէտ-բէկի մասին կը վստահացնէ նոցա, որ ծանր պատժոյ և բանտարկութեան պիտի ենթարկել տայ, եթէ նոքա կարողանան իւր ներկայութեամբ ապացուցանել նորա մասին պատմածներից գոնէ մի երրորդ մասը։ Ամմէտ-բէկն արդարև փաշայի ներկայութեամբ դատի կոչուեցաւ։ Իսկ ի դիմաց ընդհանուր գաւառի դատախազներ եղան Տէր-Յարութիւն քահանան, Նազարէթ աղա Գրիգորեանը, Բարսեղ աղա Զաքարեանը և Յովհաննէս էֆէնտի Մուրատեանը։ Հայերը դատը տարին։ Ամմէտ-բէկը թէ ըստ օրինաց և թէ միւթէսէրիֆ փաշայի խոստման, պէտք է պատժուէր։ Այո, «պէտք է պատժուի Ամմէտ-բէկը», վճռեց նաև Բայազիտի դատաստանական վարչութիւնը. բայց երբ, այդ մնայ գուցէ յաւուր յետման։ Ամմէտ-բէկը պատժուելու փոխարէն բարձրացաւ համիդիականութեան մերալայի պաշտօնին։

Նա վրէժխնդրութեան ոգով բորբոքուած (գուցէ և ուրիշներին հրահանգով ևս) վերադարձաւ Բայազիտից իւր բնակավայր Թոփրա-Կալէ։ Եւ որպէս անդրանիկ արգասիք իւր այդ վրէժխնդրութեան, հրձիգութեան մատնեց Թոփրա-Կալէի եկեղեցին։ Այդ բանը կատարուեցաւ մայիսի 16-ին, երեքշաբթի օր, այսինքն դատավարութիւնից յետոյ դեռ մի ամիս չլրացած։

Ընդհանուր կատարուած չարագործութիւններից և անարգանքներից, զգալի կերպով զերծ էին միայն կրօնական սրբութիւններ։ Այդ թուականից նոքա ևս սկսան մատնուիլ նոցա անբարշութեանց։ Նոյն օրերի մէջ, երբ Թոփրա-Կալէի եկեղեցին հրդեհեցին, համիտականները կողոպտեցին նաև Խաստուր գիւղի եկեղեցին և յափշտակեցին նորա նուիրական բոլոր անօթները։

Ժամանակի ընթացքը օր ըստ օրէ նպաստում էր կառավարութեանը՝ իւր դիտաւորեալ միտքը յառաջ տանելու. դոցանից մէկն էլ հանդիսացաւ անշուշտ այդ գաղթելու խնդիրը, որ Ալաշկերտցին ցանկացաւ կատարել դէպի Պարսկաստան. մի այնպիսի երկիր, որ չնայած իւր դաւանած մահմեդական կրօնին, ամենատերիմ թշնամին կարող է համարուել օսմանլիներին։

Կառավարութիւնը՝ համիտականներին ևս առաւել բորբոքելու համար, ըստ կրսաւ հայերի այդ գաղթը նոցա պետերի մօտ կամ շէյխերի ու մոլլաների բերանով լուսաբանել զանազան ձեւերով ու մաքերով։ Ըստ կուզեմ այնպիսի հայեցակէտերով, որպէս թէ համիդիականները երբ անտարբեր գտնուին, հայերին պիտի յաջողի զրկել նոցա իրանց դարաւոր աւանդական իրաւունքներից, հողից, ջրից, և վերջապէս համարեա մարդկային ամենատարրական իրաւունքներից։

Համիդիականները անսալով իրանց նենգ կրօնակից բարեկամին չափազանցրին իրանց ատելութիւնն ու թշնամանք դէպի ողորմելի հայերը, դէպի մի տարր, որի հացով, ջրով և ճակտի քրտամբ դարերու ընթացքում ապրել են նոքա, ինչպէս և տիրող ապերախտ կառավարութիւնը...Այդ ատելութեանը մի որոշ սահման դնելու և կամ մի դադար տալու համար հերիք կը լինի ասել, որ ամեն պատահածին, ինչ հային կը վերաբերի, նորա ջանք և միջոց չէին խնայի մնասելու և վանդալու նորան։

Այդ ժամանակներին էր, որ Խաչու գիւղի ամբողջ նախիրը, որ բաղկացած էր մօտ 1500 գլուխ անասուններից, համիտականները յափշտակեցին։ Նոյնպէս Խայապէկ գիւղի ոչխարաց հօտ, որի քանակութիւնը անց էր 1000-ից՝ յափշտակեցին։ Խաչու և Խայապէկ գիւղերը, որ բաղդակից եղան, հաղիւ մէկ ժամուայ հեռաւորութիւն ունին միմեանցից։ Թոփրա-Կալէի բնակիչ Զաքարեան Բարսեղ և Նալբանդեան Մուքիաս աղաների գոմերը, որ Թոփրա-Կալէից կէս ժամուայ հեռաւորութեան վրայ էր կառուցուած, ուղղակի հազարաւոր ոչխարների վրայ հրդեհեցին։ Համիտականներէն չորս հոգի, Խոզուզ գետի եղերքին, բռնեցին Մօլլա-Սլէյման գիւղի հայ կաթոլիկ քահանան, որ Թոփրա-Կալէից կը վերադառնար իւր տուն, մերկացնելով նորան իւր զգեստներից, ունեցածից և ժամացուցից, ազատ կարձակեն։ Ողորմելի քահանան կրած զրկանքներից և անարգանքներից հաղիւ հազ ապրեցաւ մի շաբաթ և ի Տէր փոխուեցաւ... անշուշտ ի նախատինս քրիստոնեայ ազգին և թրքամոլ Ազարեան պատրիարքին։ Այդ ժամանակներին էր, որ Թոփրա-Կալէի և Մօլլա-Սլէյման գիւղի միջավայրը համիդիականները չարաչար տանջանօք սպանեցին Բուր կամ Ելնթափայ գիւղի երիտասարդներից Վարդան անունով մէկը։ Դժբախտ Վարդանի գերեզմանը այս բոպէիս կարծես ուխտատեղի է դարձած տեղային ժողովրդի կողմից։ Իւրաքանչիւր այդ մտական նախարարութեան կողմէ տրուած պատասխան սա է թէ Մեջլիսը իտարէները, որոնք պետական խորհրդին մէկ որոշումին համեմատ ձեռնհաս եւ պարտաւոր են ծախու հանել հարկապարտներու ստացուածքը, պարտին իրենք գրել և գրկել վերոյիշեալ ազգաբարգրիրը և յետոյ ձեռնարկել պարտապանին ստացուածքին վաճառման»

Սակայն լսողն ով, գործադրողն ով։

Այսպէս եղաւ ժողովրդի վիճակը, երբ քննիչ յանձնաժողովը լծուցեց Մուշը և հեռացաւ նորանից, երբ լսելի դարձած բարենորոգմանց ծրագիրը 'ի չիր դառնալու նշաններ ցոյց տուաւ։ Այս կերպ դառն և աղիողորմ է ահա թէ երկրագործ թէ բաղաքացի ժողովրդի ներկայ դրութիւնը։ Գուցէ հասարակութիւնից ոմանք, որոնց խղճի գոյութիւնը այնքան է, որքան մի մահմեդականի բթացած զգացմունք, կուրացած միտք, սոցա կանուանէ հանապազեայ կրկնութիւն կամ չափազանցեալ։ Ողորմելիներ, տեսնել պէտք է և ոչ կարդալ ու զրել։ Իսկ ամեն հանգամանքի առաջ կուրանալ։

Ռէհվի-Քուվի։

---

*) Փառք Բարերարին, այս նահանգը կատարեալ քախտաւորութեան մէջ գըտայ։

սին, որ ձի հեծած էր։ Հարսը տեսնելով սպառազինեալը, վախէն ձիու վրայէն ինքզինք կը նետէ, բթէն բերնէն արիւն կը հոսէ. տեսնելով անոր վիճակը դարձեալ կը կատարին իրանց չարագործութիւն ու այնպէս յետս կը դառնան։ Դարձեալ յիշեալ սրիկաներ Զարահիսարի մէջ տուն մը երթալով հայ կինէ մը օղի կուզեն։ Հայ կինը կը պատասխանէ՝ չունիմ, քիչ մը սպասցէք. «այ, հիմա կուգենք». հոս կռիւ ընելէն վերջը սրիկայք կանցնին Ջալայկա տուն. հոն ալ մի հայ գտնելով կուզ կը հանդիպին։ Այդ հայը խեղդած միջոցին մի ջուրեպան հայ, որ քաջ անձ մ'է եղեր, նոցա մէկ մէկ հարուած տալով կըփռէ յերկիր, և միւս տղուն մահուանէ կ'ազատէ։ Այսպէս մի քանի տեղեր փղոցներու մէջ չվիրաւորուած հայեր չկան։ Ասոր համար քաշուած են գերեզմաններուց։ Կառավարութիւնը մի քանի միջնորդներ ղրկած է. օգուտ չէ ըրած, դարձեալ կը սպասին հոն...

Թ.

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գ. Խմբագիր.

Ամարանոցից վերադառնալով, լսեցի, որ «Արձագանքի» պ. պ. թղթակիցները թեմիս դպրոցների և իմ մասին քանի մի գիտողութիւններ են լոյս ընծայել։ Չեռք բերելով համարները, կարդացի և սրանով խոնարհաբար խնդրում եմ շնորհ անել հրատարակել իմ յետագայ տեղիքները՝ թէ իբրև սրբագրութիւն և թէ իբրև լուսաբանութիւն այն թղթակցութիւնների սխալ և մութ կէտերի վերաբերմամբ։

№ 84-ի մէջ Ախալքալակի պ. թղթակիցն ի միջի այլոց գրում է... «Ընդարձակ գաւառում հայ դպրոցի երես չէք տեսնիլ»... «հայը թեմական տեսուչները...այցելել են մեր քաղաքի դպրոցները և իսկոյն վերադարձել Ախալցխա»։ Ուղիղ չէ. Ներկայ 1894-95 ուս. տարիշրջանում բացուել են Խանդո, ձանձղա և Կարզաս գիւղերում դպրոցներ, որոնց և այցելել եմ (բացի Կարզախից), և բացուելու են Ծալկայում՝ առաջիկայ սեպտեմբերի մէջ՝ երկու կենդրոնական դպրոցները՝ Ղազլքիլիսա և միւսը՝ Նարդիւան գիւղերում։

№ 89-ի մէջ Ախալցխայի պ. թղթակիցը 29-ից յուլիսի գրում է... «Ուսուցիչներն անսրոչ դրութեան մէջ են. չըգիտեն՝ մնալու են իրենց պաշտօնում թէ ոչ, և թէ ինչ պայմաններով»։ Սխալ է. նախ՝ հարցաքննութիւններից յետոյ պ. ուսդ ուսուցիչը յայտնել է ամենքին, որ մնալու են իրանց պաշտօններում, բացի երկուսից։ Երկրորդ պ. թղթակիցը շարունակելով իր խօսքը՝ ասում է. «մոտերքս հ. թեմական տեսչից մի գրութիւն է ստացուել, որով յայտնուած է, թէ ուսուցիչների դասերի թիւը maximum պիտի լինի 24»։ Ուրեմն էլ ինչու ուսուցիչներն անսրոչ դրութեան մէջ են և այն։ Այո, ես ես գիտեմ, որ դասերի թիւը 30-ից 24-ի իջեցնելով պակասում են ռաճիկները. սակայն ինչ արած։ 30-ական դաս վերցնելով, ոչ միայն անհնարին չափով ծանրաբեռնում են ուսուցիչները, այլ և դասացուցակ կազմել չի լինում. որովհետև 8 բաժանմունքներից 2 բաժանմունքներում միայն 30-ական դասեր կան. իսկ մնացած 6 բաժանմունքում 21-ից 26։ Աւագների 400-ական ռուբլի տանալը կոպարով է. թող մի վերջը նեղութիւն քաշի ուսումնասիրելու պ. թղթակիցը և հանելուկ կարծուածը կը պարզուի. յուսամ ինքը այն ժամանակ կը շտապի իր մի անգամ մասամբ ուղղած սխալը, վերստին ուղղելու։ 8—8 բաժանմունքներից բաղկացած իւրաքանչիւրը 9-ից 10-ը ուսուցիչ-վարժուհիներ (ընդամենը 20 հոգի) ունեցող, 350-ից 410 աշակերտ պարունակող և տարածութեամբ միմեանցից հեռու ընկած դպրոցներին մի՝ թէկուզ համալսարանաւարտ տեսուչ կարգելը ես ընաւ օգտաւէտ չեմ գտնում։

№ 94-ում «Ծուրզուսի ուսումնարանական հարցը» վերնագրով մի յօդուածում պ. հեղինակը պատմում է դպրոցի սկզբնաւորութիւնից մինչև փակուիլը. աւելացնելով՝ «Ծուրզուսի հասարակութեան անդառնալի ցանկութիւնն է անպատմառ այս սեպտեմբերից իւր ուսումնարանը բացուած տեսնել... Հրաւիրում ենք Թեմիս հայր Թեմական տեսչի ուշադրութիւնը այս հանգամանքի վրայ»։ Ուրախ եմ, որ այդ ցանկութիւնը կը կատարուի. 1884 թուականից փակուած դպրոցը վերարձնելու մասին հոգացել եմ դեռ անցեալ աշնանը՝ Ախալցխա եղածս ժամանակ։ Իմ խնդրանօք Ախալցխայի հայր գործակալը, որդւոյց դպրոցի պ. ուսդ ուսուցիչը գնացած են Ծուրզուսս, յորդորած են հասարակութեանը դպրոցական շինութիւնը վերանորոգելու—պատրաստելու և առաջիկայ սեպտեմբերից, առանց պ. յօդուածագրի կողմից նեղութիւն քաշելու իմ ուշադրութիւնը հրաւիրելու, դպրոցը կը բացուի։ Դեռ ամսոյս 3-ին № 893 գրութեամբ առաջարկութիւն եմ արել պ. Բ.-ցին Ծուրզուսի դպրոցի ուսուցչական պաշտօնն ընդունելու և՝ համաձայնութիւնը ստանալուն պէս՝ ոյն ամսոյս 15-ին № № 960 և 961 թղթերով հրաւիրում եմ պ. ուսուցչին սեպտեմբերից Ծուրզուսի դպրոցի ուսուցչական պաշտօնն ստանձնելու և տեղեկացնում եմ այդ առթիւ հայր գործակալին։ Այժմ էլ միջոցների եմ դիմած Աղգօրի փակուած դպրոցը վերարձնելու մասին։

Թեմական տեսուչ՝

Մեսրոպ քահանայ Մելեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

„Indépendance Belge“ լրագիրը իր վերջին համարում առաջ է բերում հետեւեալ խուանշանները զանազան եւրոպական պետութեանց ոյժերի մասին։ Առաջին տեղը բռնում է Ռուսաստանը, որ խաղաղ ժամանակ 858,000 մարդուց բաղկացած զօրք ունի, ասել է 9 զինուոր 1000 մարդ բնակչութեան վրայ։ Սորան հետեւում է Գերմանիան 580,000 մարդ, (13 զինուոր 1000 մարդ բնակչութեան վրայ), Ֆրանսիան 513,000 մարդ (14 զինուոր 1000 մարդու վրայ)։ Աւստրիան 380,000 զօրք ունի (10 զինուոր 1000-ի վրայ), Իտալիան 300,000 մարդ (10 զինուոր 1000-ի վրայ)։ Անգլիան 230,000 մարդ մշտական զօրք ունի (10 զինուոր 1000-ի վրայ), Զուլցերիան 131,000 (45 զինուոր 1000-ի վրայ), Սպանիան 100,000 մարդ (6 զինուոր 1000-ի վրայ), Բելգիան 31,000 մարդ (8 զինուոր 1000-ի վրայ)։ Ֆրանսիան և Ռուսաստանը միասին խաղաղ ժամանակը 1,400,000 մարդ զօրք ունին, իսկ պատերազմի ժամանակ 9,700,000 մարդ։ Երից պետութեանց զինուորական ոյժը խաղաղ ժամանակ 1,192,000 զինուոր է, իսկ պատերազմի ժամանակ—7,700,000։

Այս տեսակին զինուորումը նստում է պետութիւններին տարեկան 5 և կէս միլիարդ ֆրանկ։

ԻՏԱԼԻԱ և ՀԱԲԵՇՍՏԱՆ.—«Tribuna» լրագրին Էրեթրէյից գրուած թղթակցութեան մէջ ասուած է, թէ հարեւանները պատերազմելու պատրաստութիւններ են տեսնում։ Թղթակիցը խորհուրդ է տալիս Իտալիային անյապաղ եռանդուն միջոցներ ձեռք առնել Մենելիքի դէմ, մինչև վերջինս կարող կըլլինի բաւական ուժի զօրք ժողովել։

Միւնոյն ժամանակ Վիեննայի «Politische Correspondens» լրագրին գրում են, թէ Մենելիքի գրութիւնը չափազանց ծանր է. նրանից զգոյշ են թէ ժողովուրդը և թէ դեսպանները։ Սպասւում է թէ այսօր չէ վաղը նա զահազուրկ կըլլինի։ Հետեւաբար պատերազմի մասին չի էլ կարող մտածել։

ՃԱՓՈՆԻԱ.—Ճապոնիան շարունակում է իւր մարտանաւերն ուժեղացնել։ Վերջերս նա Անգլիայում երկու ահագին մարտանաւ է պատուիրել, որոնք պատրաստ պիտի լինին նոյեմբեր ամսին։

ԿՈՒԲԱ կղզի վրայ ապստամբութիւնը շարունակւում է։ «National Zeitung»-ի թղթակիցն այսպէս է բացատրում։ Ժողովուրդը տնտեսական նեղ դրութեան մէջ է։ Իսպանիայի կառավարութեան գործակալները իրանց նպատակ են դարձրել երկիրը կողոպտել և իրանց համար հարստութիւն դիզել։

Երբեմն դրանք այնպիսի միջոցներ են գործադրել, որոնց դէմ Կուբայի ժողովուրդը չէր կարող ամենատանդուն կերպով բողոքել։ Ժողովրդի բողոքը մինչև Մադրիտի կենդրոնական կառավարութիւնն է հասել, բայց երբէք ուշադրութեան չի արժանացել։ Այժմ ժողովուրդը վճռել է, իւր ձեռքով իւր գրութիւնը բարւոքել։ Բացի դրանից ժողովուրդը գոհ է և տիրող մարդասիրական յարաբերութիւններից։ Այն ինչ Իսպանիայի վաճառականները առանց որևէ հարկի ենթարկուելու Մեծ Անտիլեան կղզիներն են մտնում. Կուբայի վաճառականները մեծ հարկերի են ենթարկւում՝ ինչպէս արտասահմանեան ապրանքներ։ Եթէ ապստամբութիւնը նոյն իսկ այժմ զէնքի զօրութեամբ ճնշուի, դարձեալ Իսպանիան պէտք ժողովրդի պահանջներին իրական գոհացում տայ, ապա թէ ոչ՝ երբէք խաղաղութիւն չի լինիլ։ Ապստամբները Կուբայի համար կատարեալ ինքնավարութիւն են ցանկանում։ Նրանք ուզում են, որ Իսպանիան միայն մի ընդհանուր նահանգապետ նշանակի. իսկ բոլոր ատենադատաւորները իրենցից լինին։

«ԱՐԶԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Օգոստոսի 31-ից.

ՁՏԷՏԻՆ, («Վօլֆ»).—Կայսրն ինքը յանձն առաւ զօրախաղին մասնակցող զօրքերից մէկի կառավարելը։

ԱԹԷՆՔ, («Հաւատ»).—Էրէա կղզու վրայ սաստիկ երկրաշարժ եղաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Օգոստոսի 28-ից.

Վերջէլի կուրս 3 տոմսով։

Լօնդոնի վրայ 10 ֆ. ստ.	92,95
Բերլինի վրայ 100 մարկ	45,275
Փարիզի վրայ 100 ֆր.	36,675
Նոր կարած պօլտիմպերիալներ	7,40 գն. 7.40 վաճ.
Բօրսայի վերջը	5-ից 7%
4% Պետական արժեթղթ.	99 1/8
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	161
5% Առաջին նեղքին փոխ. խաղաստոմս 1864 թ.	276
5% Երկր. նեղքին փոխառ. խաղաստոմս 1866 թ.	243
5% Ընդհանուկ. հոդ. բանկի գրաւական. խաղաստոմս.	215 1/2
5% Պետական երկաթուղու արժեթուղթ	101 3/16
4% Նեղքին փոխ. 1 սեր.	98 3/4
» » » II »	98 3/4
» » » III »	98 3/4
» » » IV »	98 3/4
4 1/2% փոխ. 1893 թ. սեր.	101 1/2
» փոխ. 1 հրատարակ.	100 3/4
» փոխ. 2 հրատարակ.	100 3/4
4 1/2% Գրաւակ. արժեթղթ. ազն. հողային բանկի.	100 1/2
4 1/2% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր.	100 7/8
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	101 1/2
» Մոսկուայի	101
5 1/2% Օգնոյի	100 1/8
5% Թիֆլիսի	99 5/8
5% Գրաւակ. արժեթ. հոդ. բանկերի Խարկովի	100 1/2
» Պօլտաւայի	99 3/4
» Տուլայի	99 3/4
» Կիեւի	100
» Մոսկուայի	100
» Բեսարաբիայի	99 3/4
» Նեղքին Սամարայի	99 3/4
» Դօնսկոյ	99 3/4
» Վեղենկի	100
6% և 5% Թիֆլիսի	101 1/2 և 99 1/2 գն.
» Քութայիսի	101 1/2 և 99 1/2 գն.

ԶԱՆԱԶԱՆ

Թիւրքիայի յառաջադիմութիւնը.—Սուլթան-Աբդուլ Մեջիդի ժամանակ՝ այսինքն սրանից 45 տարի առաջ՝ սուլթանի արքունիքը՝ իւր հարեմով չորս հազար ծառայող և 500 խոհարար էր պահում. իւրաքանչիւր օր 900 ոչխար էր մորթւում։ Եւ դրա համար Հայաստանից՝ իբրև հարկ տարեկան 30 միլիոն ոչխար էր գնում։

Ներկայ սուլթանի ժամանակ ծառայողների թիւը վեց հազարի է հասնում. 800 խոհարար է պահւում. օրէնը 1200 ոչխար է մորթւում, Հայաստանից տարեկան 40 միլիոն ոչխար է հանւում։

Եւ դեռ ասողներ կան, թէ Թիւրքիան չի յառաջադիմում։

Ամերիկեան լրագրական ճշտութիւն.—Նիւ-Յորկի մի թերթ այս օրերս հաղորդել էր որ մօտակայ կիւրակէ օրուայ համարում մի ընդարձակ յօդուած է հրատարակելու Կիեվելէնդի, Նորա վերդաստանի, ամուսնու և որդոց ամարային կենցաղավարութեան մասին, այլ և լրագրի աշխատակցի խօսակցութիւնը Միացեալ-Նահանգներին նախագահի հետ։ Կիւլենդը տեղեկացրեց ուղղակի խմբագրին հետեւեալ հեռագիրը. «Ձեր աշխատակիցը չէ տեսել ոչ ինձ և ոչ տան և իսկ իմ մերձաւորներից։ Այն բոլորը՝ ինչ որ գրած ապազրելու էր, անամօթ սուտ կը լինի»։ Հետևելով այս բողոքին, լրագիրը ամենայն անկողբութեամբ ապազրեց խաստացած յօդուածը. բայց որ ուրի «գօրքաս» է, այս յօդուածի ճակատին տպագրուել է Միացեալ-Նահանգների պաշտպանի յիշեալ հեռագիրը։

Խմբագիր-Հրատարակիչ՝

ՍԱՐԳԻՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բայի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԻՆՕՂԼԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ—ՀՀԵՐԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուչաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ, ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մաքթի հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7 1/2 ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խլեի, արեան, կաթի և այլն։

Վճարը 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան

ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.

ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակի, Սերգիւսկի փողոց № 14.

Իւր բացակայութեան պատճառով ամառս Հիւանդներին կ'ընդունէ դոկտոր Սամուէլ Շահ-Պարոնեանցը նշանակեալ ժամերին։

Բացի գիշերից գործադրւում են նաև զանազան տեսակ ՋՐԱՐՈՒԹԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԹԱԿԱՆ և այլ ֆիզիկական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և ոտն օրերից)

12 1/2—1 1/2 ժ. ցերեկը { կինարմատները և երեխաները

1 1/2—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան { տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասնագետ անոյ կին և մասնաժիտ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բաթու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բաթուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանք-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանք-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական հանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում. Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գոլովասի ուսումնարանական շրջանի պ. Տոգարարձուի թոյլտուութեամբ բացվում է

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Գ. Կ. ԿՈՒՉԱՆԵԱՆԻ

(Մուխրանսկայա փ. ս. Գօրգանովի № 12, Վանքի ատաղ եկեղեցու մօտ)։

Ընդունելութեան քննութիւնները օգոստոսի 25-ից, պարապմունքները սեպտեմբերի 1-ից։ (3—3)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է ՊՈՒՐՋՈՒԹԻՒՆ

„ԿԱՊԻՏԱՆԻ ԱՂՋԻԿԸ“ (4—4)

ՄԻ ՓՈՐՁՈՒՌԱ ՈՒՍՈՒՑԻՉ, որ երկար տարիներ ուսուցչութիւն է արել՝ պաշտօն է որոնում ծխական դպրոցներում։

Հարցնել՝ Թոլստոյինսկի պրոսպէկտի վրայ Ջօրջաձէի մագազինում։ (3—3)

Սորանով յայտնում եմ ի գիտութիւն հայ հասարակութեան, որ ներկայ սեպտեմբերի 1-ից ընդունվում են Զրկիներից Սուրբ Կարապետ եկեղեցւոյ մոգասեան ծխական ուսումնարանում նաև օրիորդներ. ցանկացողները կարող են դիմել ինձ խնդրագրով՝ ներկայացնելով ծննդեան և ծագկի վկայականներ։

Նախագահ հոգաբարձութեան՝ Ներսէս աւագ քահ. Տէր-Բարսեղեանց։ (2—1)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ եւ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻ

Ընդունվում են գիշերօթիկ, կիսաթոշակաւոր և երթեւեկ աշակերտներ։ Պատրաստվում են գիմնազիայի, ռէալական դպրոցի, կադէտների կորպուսի և այլ ուսումնարանների համար։ Գիշերօթիկ ընդունվում են և ուրիշ ուսումնարանների աշակերտներ։

Հասցէն. ТИФЛИСЪ, Сололаки, Гановская ул. № 11. (4—1)

«ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ» վաճառվում են ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐՋՆԿԵԱՆՑԻ հետեւեալ աշխատութիւնները.

	Ռ. կ.
ԱՇԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ	
Թուաբանական խնդիրներ եւ օրինակներ I և II տարի	— 30
» » III տարի	— 35
Բնախօսութիւն Փօսթէրի, յիսունից իջեցրած	— 30
ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԱՄԱՐ	
Պատմութիւն Մանկավարժութեան	1 —
Դասաւանդման խորհուրդներ, երեսունից իջեցրած	— 20

(10—1)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՕՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ռ. ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԴՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծովային գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. դրամագլխի, որ պիտի ետ տրուի իւր մահից յետոյ, եթէ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող գրամագլուխն ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկուայում, Ընկ. Գովկասի Վարչութեան մէջ Թիֆլիզում (Վելեամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ։ Կայսրութեան բոլոր քաղաքներում։

Հասարակութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդունելութիւնը բացուած է Կուկիայում, 3-րդ հաշտարար դատարանի կողքին, տ. Ալեքսանի, Ֆեոդոր Ալեքսանդրովիչ Իւանովի բնակարանում։ (100—33)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարն. հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑՄՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսուայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաձարկել։

ՊԵՐՈՊՈՐՈՒՆՔԻ ԸՆԱՐԿԵՆՆԵՐՆ ԵՆ

ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուապահութեան։

բ) Առևտրական թուաբանութիւն։

գ) Առևտրական նամակագրութիւն։

դ) Գեղագրութիւն և ամենավառ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքներն սկսուելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակուելու են իւրաքանչիւր ՀՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Քրէչինեան փողոց, տուն Սալխանովի, № 13։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախսում է Թիֆլիզում, Խերսոնէզի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ Գինն է 3 ռ. 50 կոպ.։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։ (15—7)

Дозволено цензурою, Тифлисъ 31-го Августа 1895 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.